

Աննա Շահնազարյան | Անահիտ Հարությունյան | Լիլիթ Սեյրանյան

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃՌԻ ԿԱՄ
ՈՐՈՇՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ
ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ԿԻՐԱԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երևան
2025

ՀՏԴ 341
ԳՄԴ 67.9
Շ 212

Հեղինակներ

Աննա Շահնազարյան՝

Միջազգային իրավական հարցերով
ներկայացուցչի գրասենյակի ղեկավարի տեղակալ

Անահիտ Հարությունյան՝

Միջազգային իրավական հարցերով
ներկայացուցչի գրասենյակի հետազոտությունների
և զարգացման վարչության պետ

Լիլիթ Սեյրանյան՝

Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի
գրասենյակի հետազոտությունների և
զարգացման վարչության գլխավոր մասնագետ

Շահնազարյան Ա., Հարությունյան Ա., Սեյրանյան Լ.
Շ 212 Եվրոպական դատարանի վճռի կամ որոշման հիման
վրա ներպետական մակարդակում գործերի վերաբացման
ինստիտուտի և դրա գործնական կիրառման առանձնա-
հատկությունները / Ա. Շահնազարյան, Ա. Հարությունյան,
Լ. Սեյրանյան.- Եր.: 2025.-82 էջ:

ՀՏԴ 341
ԳՄԴ 67.9

ISBN 978-9939-977-13-3

© Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ
Հետազոտությունների և զարգացման վարչություն, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՀԱՄԱՐ.....	7
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	9
1. Ներպետական դատական վարույթների վերաբացման առնչությամբ ընդհանուր դրույթները	11
1.1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 46-րդ հոդվածը.....	11
1.2. Նախարարների կոմիտեի R(2000)2 հանձնարարականը.....	12
1.3. Հանձնարարականի և կից բացատրական հուշագրի հիմքում ընկած հիմնական մոտեցումները համառոտ.....	13
1.4. Restitutio in integrum	14
1.5. Խախտում արձանագրող բոլոր գործերի վերաբացման անհրաժեշտության բացակայությունը.....	16
1.5.1. Pisano v. Italy, (գանգատ № 36732/97)	16
1.5.2. Brumarescu v. Romania, (գանգատ № 28342/95).....	17
1.5.3. Sejdic v. Italy, (գանգատ № 56581/00).....	18
1.6. Անդամ պետությունների հայեցողությունը. գործերի վերաբացման համատեքստում հայեցողական լիազորության հիմնական չափանիշները	19
1.7. Վերաբացման պայմանի առկայությունը Եվրոպական դատարանի վճռում և դրա «հետևանքները»	22
1.7.1. Gaspari v. Slovenia, (գանգատ № 21055/03).....	23
1.7.2. Al-Khawaja and Tahery v. the United Kingdom [GC], (գանգատներ №s 26766/05 and 22228/06).....	24
1.7.3. Yaremenko v. Ukraine (№2), (գանգատ № 66338/09).....	25
1.7.4. Guta Tudor Teodorescu v. Romani, (գանգատ № 33751/05).....	26
1.8. Վերաբացված վարույթի արդյունքին սպասելու անհրաժեշտության բացակայությունը.....	27
1.8.1. Mitrov v. “the former Yugoslav Republic of Macedonia”, (գանգատ № 45959/09).....	27
1.8.2. Naltakyan and others v. Armenia, (գանգատ № 47448/12)	28
1.9. Անդամ պետությունների կողմից իրենց վերապահված հայեցողական լիազորության կիրառման դեպքերը՝ հիմնված «գործ առ գործ» (case by case) մոտեցման վրա.....	29

1.9.1. Ferreira v. Portugal (no. 2), (զանգատ N° 19867/12)	30
1.9.2. Verein Gegen Tierfabriken Schweiz (VgT) v. Switzerland (N° 2), (զանգատ N° 32772/02)	31
1.9.3. Salduz v. Turkey, (զանգատ N° 336391/02)	32
1.9.4. Öcalan v. Turkey, [GC], (զանգատ N° 46221/99).....	32
1.10. Ներպետական վարույթի վերաբացման համատեքստում Եվրոպական դատարան-Նախարարների կոմիտե «Երկխոսությունը»	33
1.10.1. Verein Gegen Tierfabriken Schweiz (VgT) v. Switzerland (N° 2), (զանգատ N° 32772/02)	34
1.10.2. V.D v. Croatia (N° 2), (զանգատ N° 19421/15).....	36
2. Ներպետական դատական վարույթների վերաբացման անհրաժեշտությունը և անհրաժեշտության բացակայությունը	38
հիմնավորող ընդհանրական հիմքերը, վերաբացմանը խոչընդոտող հանգամանքները և դրա այլընտրանքները	38
2.1. Վերաբացման անհրաժեշտությունը հիմնավորող ընդհանրական հիմքերը.....	38
2.2. Դեպքեր, երբ վերաբացումը չի «խրախուսվում».....	40
2.2.1. Assanidze v. Georgia, (զանգատ N° 71503/01).....	41
2.2.2. Papamichalopoulos and Others v. Greece, (զանգատ N° 14556/89)	42
2.2.3. Loizidou v. Turkey, (զանգատ N° 15318/89).....	43
2.2.4. Amuur v. France, (զանգատ N° 19776/92).....	43
2.3. Վերաբացմանը խոչընդոտող հանգամանքները	44
2.3.1. Իրավական որոշակիություն և res judicata.....	45
2.3.1.1. Tregubenko v. Ukraine, (զանգատ N°61333/00)	45
2.3.1.2. Sakhvadze v. Russia, (զանգատ N° 15492/09)	46
2.3.2. Non reformation in peius (դիմումատուի վիճակը չվատթարացնելը)	46
2.3.2.1. Guerra v. Italy, (զանգատ N° 116/1996/735/932)	47
2.3.2.2. Lorefice v. Italy, (զանգատ N° 63446/13)	47
2.4. Վերաբացման այլընտրանքները	48
2.4.1. Ֆինանսական հատուցումը	48
2.4.2. Ներումը կամ համաներումը քրեական գործերով	49
2.4.3. Այլընտրանքային այլ միջոցները.....	50
3. Քրեական գործերի վերաբացման	52
առանձնահատկություններն ըստ կոնվենցիոն հոդվածների	52

3.1. Կոնվենցիայի 2-րդ հոդված (կյանքի իրավունքը)	52
3.2. Կոնվենցիայի 3-րդ հոդված (խոշտանգումների արգելումը)	53
3.3. Կոնվենցիայի 5-րդ հոդված (ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը)	55
3.4. Կոնվենցիայի 6-րդ հոդված (արդար դատաքննության իրավունքը)	56
3.5. Կոնվենցիայի 7-րդ հոդված (պատիժ բացառապես օրենքի հիման վրա)	60
4. Քաղաքացիական և վարչական գործերի վերաբացման առանձնահատկություններն ըստ կոնվենցիոն հոդվածների	62
4.1. Կոնվենցիայի 6-րդ հոդված (արդար դատաքննության իրավունքը)	62
4.2. Կոնվենցիայի 8-րդ հոդված (անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը)	63
4.3. Կոնվենցիայի 9-րդ հոդված (մտքի, խղճի և կրոնի ազատությունը)	65
4.4. Կոնվենցիայի 10-րդ հոդված (արտահայտվելու ազատությունը) ..	66
4.5. Կոնվենցիայի 14-րդ հոդված (խտրականության արգելումը)	67
4.6. Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված (սեփականության պաշտպանությունը)	68
5. Գործերի վերաբացման առանձնահատկությունները	72
կողմերի միջև ձեռք բերված բարեկամական կարգավորման կամ պետության կողմից հաստատված	72
միակողմանի հայտարարության առկայության	72
պայմաններում	72
5.1. Եվրոպական կոնվենցիոն համակարգի զարգացումներն ու առանձնահատկությունները	72
5.2. Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայի զարգացումը և ներպետական օրենսդրության փոփոխությունները ...	78
ԱՄՓՈՓՈՒՄ	80

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԶԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Սույն ուղեցույցը մշակվել է Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի կողմից՝ «Աջակցություն Հայաստանում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների արդյունավետ կատարմանը» ծրագրի շրջանակներում կազմակերպված աշխատաժողովների արդյունքում: Ծրագիրն իրականացվել է Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար 2023-2026 թվականների Գործողությունների ծրագրի շրջանակներում և ֆինանսավորվել է Մարդու իրավունքների հավատարմագրային հիմնադրամի կողմից: Սույն աշխատության մեջ արտահայտված կարծիքները հեղինակ(ներ)ի պատասխանատվությունն են և կարող են չարտացոլել Եվրոպայի խորհրդի պաշտոնական քաղաքականությունը:

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՀԱՄԱՐ

Վերջին հինգ տարիների ընթացքում Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ռազմավարական հիմնական առաջնահերթություններից է եղել և շարունակում է մնալ մարդու իրավունքների եվրոպական չափանիշների արդյունավետ ներդրումն ազգային մակարդակում: Այս ուղղությամբ հետևողական աշխատանքների շնորհիվ Գրասենյակին հաջողվել է մշակել և ազգային շահագրգիռ մարմիններին տրամադրել գործնական գործիքակազմ, այդ թվում՝ թեմատիկ ուղեցույցներ՝ ուղղված ներպետական իրավական պրակտիկայի համապատասխանեցմանը Եվրոպական կոնվենցիային:

Սույն ուղեցույցը անդրադառնում է այդ գործընթացի առավել նուրբ ու բարդ ուղղություններից մեկին՝ Եվրոպական դատարանի վճիռների կամ որոշումների հիման վրա ներպետական դատական վարույթների վերաբացման հարցին: Այն ներառում է վերաբացման իրավական կարգավորման, հիմնարար սկզբունքների և համադրական դատական պրակտիկայի համապարփակ վերլուծություն՝ ծառայելով որպես գործնական աջակցություն այն մասնագետների համար, ովքեր ներգրավված են Եվրոպական դատարանի վճիռների և որոշումների կատարման գործընթացում:

Ուղեցույցը նաև կազմում է Գրասենյակի կողմից մշակված մեթոդաբանական նյութերի ամբողջության մաս, որն ուղղված է Եվրոպական կոնվենցիայից և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից բխող չափանիշների արդյունավետ ներդրմանը և ամրապնդմանը: Մասնավորապես, նախկինում հրապարակված և ար-

դեն հասանելի թեմատիկ ուղեցույցներն են՝

- Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի տեղեկագիր.
- Անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի տեղեկագիր:

Այս հրապարակումը մաս է Գրասենյակի կողմից իրականացվող նպատակային նախաձեռնության, որն իրականացվել է Եվրոպական կոնվենցիայի 75-ամյակի շրջանակում՝ վերահաստատելով Հայաստանի Հանրապետության շարունակական հանձնառությունը՝ ամրապնդելու կոնվենցիայի վրա հիմնված եվրոպական չափանիշների ամրապնդումն ու ապահովելու դրա բովանդակային իրականացումն ազգային մակարդակում:

***Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի
գրասենյակի ղեկավար
ԼԻՊԱՐԻՏ ԴՐՄԵՅԱՆ***

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը¹ երբեմն կայացնում է խախտում արձանագրող այնպիսի վճիռներ կամ հաստատում է այնպիսի որոշումներ, որոնց արդյունավետ կատարումը ենթադրում է ներպետական գործի վերաբացում կամ վարույթի վերանայում՝ ինչպես արդարությունը, այնպես էլ խախտված իրավունքներն ամբողջական ծավալով վերականգնելու նպատակով: Այդուհանդերձ, Եվրոպական դատարանի վճռի կամ որոշման հիման վրա գործերի վերաբացման անհրաժեշտության հարցի որոշումը կամ գործերի վերաբացումն ինքնին՝ որպես ինստիտուտ, միանշանակ չէ, և դրա շուրջ անդամ պետությունների իրավական համակարգերում կոնսենսուսային մոտեցումներ գտնելը բավական բարդ է: Սա, բնականաբար, պայմանավորված է այս ինստիտուտի ինքնատիպությամբ, գործնականում դրա կիրառման հնարավոր բարդություններով, ինչպես նաև դրա շուրջ Եվրոպական կոնվենցիոն համակարգի կողմից որդեգրած մոտեցումների առանձնահատկություններով:

Սույն ուղեցույցը² միտված է ներկայացնելու Եվրոպական դատարանի վճռի կամ որոշման հիման վրա ներպետական դատական վարույթի վերաբացման կամ դրա վերանայման բոլոր հնարավոր առանձնահատկությունները: Մասնավորապես, Ուղեցույցում Եվրոպական դատարանի և Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի³ իրավաբանության ուսումնասիրության հիման վրա ներկայացված են՝

¹ Այսուհետ՝ Եվրոպական դատարան կամ Դատարան կամ Ստրասբուրգի դատարան

² Այսուհետ՝ Ուղեցույց

³ Այսուհետ՝ Նախարարների կոմիտե կամ Կոմիտե

- գործերի վերաբացման իրավական հիմքերը.
- գործերի վերաբացման հիմքում ընկած սկզբունքներն ու չափանիշները.
- վերաբացման անհրաժեշտությունը հիմնավորող հանգամանքները.
- վերաբացմանը խոչընդոտող հանգամանքները.
- վերաբացման արդյունավետ այլընտրանքները.
- քրեական գործերի վերաբացման առանձնահատկությունները.
- վարչական և քաղաքացիական գործերի, ինչպես նաև բարեկամ ական կարգավորումների և միակողմանի հայտարարությունների դեպքում վերաբացման առանձնահատկությունները:

Վերաբացման ինստիտուտի և դրա գործնական կիրառման բոլոր կողմերը (ինչպես դրական, այնպես էլ բացասական, ինչպես գործնականում բարդ, այնպես էլ հեշտ կիրառելի) շեշտադրելու համար Ուղեցույցում մանրամասն ուսումնասիրված են ինչպես Եվրոպական դատարանի, այնպես էլ Նախարարների կոմիտեի իրավաբանությունը: Այդուհետ, Եվրոպայի խորհրդի հիշյալ երկու մարմինների պրակտիկայի զուգակցմամբ և համադրմամբ առանձնացված և խմբավորված են հիշյալ ինստիտուտի և դրա գործնական կիրառման առնչությամբ բոլոր հնարավոր օրինաչափությունները: Միևնույն ժամանակ, Ուղեցույցում ընդգծված են վերոհիշյալ օրինաչափություններից շեղվող դեպքերն ու իրավիճակները՝ ինստիտուտի վերաբերյալ առավել համակողմանի և օբյեկտիվ պատկերացում ապահովելու նպատակով:

1. Ներպետական դատական վարույթների վերաբացման առնչությամբ ընդհանուր դրույթները

1.1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի⁴ 46-րդ հոդվածը

Եվրոպական Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Բարձր պայմանավորող կողմերը պարտավորվում են կատարել Եվրոպական դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործերի վերաբերյալ, որում նրանք կողմ են: Հիշյալ դրույթը մեկնաբանվում է այն իմաստով, որ պետության դեմ Եվրոպական դատարանի կողմից կայացված ցանկացած վճիռ այդ պետության համար նախատեսում է երեք տեսակի պարտականություններ՝

1. Եվրոպական դատարանի կողմից տրամադրած արդարացի փոխհատուցման վճարում՝ ըստ Եվրոպական կոնվենցիայի 41-րդ հոդվածի (*արդարացի փոխհատուցում*).

2. Երաշխավորում առ այն, որ խախտումը դադարեցվել է, իսկ հետևանքները հնարավորության սահմաններում վերացվել են (*անհատական միջոցառումներ*).

3. Վճռում արձանագրված խախտման նմանաբնույթ հավանական խախտումների կանխում (*ընդհանուր միջոցառումներ*):

Եվրոպական դատարանի վճիռը կատարելիս պետությունը ձեռնարկում է անհատական և ընդհանուր միջոցառումներ, որոնց հիմնական նպատակն է վերջ դնել խախտմանը և հատուցել դրա արդյունքում պատճառված վնասը հնարավորինս ամբողջական ծավալով:

⁴ Այսուհետ՝ Եվրոպական Կոնվենցիա կամ Կոնվենցիա

1.2. Նախարարների կոմիտեի R(2000)2 հանձնարարականը⁵

Նախարարների կոմիտեի սույն Հանձնարարականն⁶ ընդունվել է ի պատասխան Եվրոպական դատարանի վճիռների արդյունավետ կատարման առնչությամբ անդամ պետությունների միջև առկա մտահոգություններին: Նախարարների կոմիտեի համար ակնհայտ է, որ չնայած Եվրոպական դատարանի 41-րդ հոդվածի ներքո ֆինանսական փոխհատուցումը կարող է դիտարկվել հատուցման եղանակ, այդուհանդերձ, այն բավարար չի կարող համարվել այն դեպքերում, երբ տեղի են ունեցել լուրջ ընթացակարգային խախտումներ, հատկապես, քրեական վարույթի շրջանակում, որոնք «ունակ» են վտանգելու արդարադատությունը: Ուստի, Հանձնարարականը միտված է ամրապնդելու *restitutio in integrum* սկզբունքի ամբողջական ապահովումը, այն է՝ անհատի իրավունքների ամբողջական վերականգնումը՝ անդամ պետություններին խրախուսելով վերաբացել գործերը, երբ այլ ճանապարհով արդարության հասնելը հնարավոր չէ: Այս առումով գործերի վերաբացումն ընկալվում է որպես մարդու իրավունքների խախտումները շտկելու «վերջին հանգրվան»:

Այսպես, ըստ Հանձնարարականի՝ վերաբացումը, այդ թվում՝ գործերի վերանայումը, ներպետական մակարդակում պետք է հնարավոր լինի, հատկապես, եթե, համաձայն Եվրոպական դատարանի վճռի, տուժող կողմը ներպետական որոշման հետևանքով **շարունակում է կրել լրջագույն բացասական հետևանքներ**, որոնք համարժեք կերպով չեն կարող վերականգնվել արդարացի փոխհատուցման տրամադրմամբ, ինչպես նաև չեն կարող շտկվել այլ կերպ, քան վերաքննմամբ կամ վերաբացմամբ: Մեկ այլ միաժամանակյա պայ-

⁵ Այսուհետ՝ Հանձնարարական

⁶ URL: <https://rm.coe.int/16805e2f06>

մանն այն է, որ Եվրոպական դատարանի վճիռը պետք է պարունակի եզրահանգում առ այն, որ (1) *վիճարկվող ներպետական դատական ակտն ըստ էության հակասում է Կոնվենցիային*, կամ (2) *հայտնաբերված խախտումը հիմնված է ընթացակարգային խախտումների կամ այնպիսի թերությունների վրա, որոնք լուրջ կասկածներ են հարուցում ներպետական վարույթի արդյունքների վերաբերյալ*:

1.3. Հանձնարարականի և *կից քացապրական հուշագրի* հիմքում ընկած հիմնական մոտեցումները համառոտ

Հանձնարարականը կոչ է անում անդամ-պետություններին ներդնել իրավական համակարգ, որը հնարավորություն կընձեռի Եվրոպական դատարանի վճռի հիման վրա վերաբացել ներպետական վարույթը կամ վերանայել այն:

Քրեական գործերի պայմաններում Հանձնարարականի պահանջն այն է, որ քրեական վարույթների վերաբացումն անհրաժեշտ է հատկապես այն դեպքերում, երբ Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի այնպիսի ընթացակարգային խախտումներ, ինչպիսիք են «անարդար դատավարությունները», «կեղծ ապացույցներ ներկայացնելը» կամ «փաստաբանի մասնակցության սահմանափակումը»: Անդրադառնալով **քաղաքացիական և վարչական վարույթներին**՝ Հանձնարարականը նկատում է, որ այս պարագայում գործերի վերաբացումը կարող է առավել բարդ լինել *res judicata* սկզբունքի հաշվառմամբ: Ամեն դեպքում Հանձնարարականում ամրագրված մոտեցումն այն է, որ քաղաքացիական և վարչական գործերի դեպքում *restitutio in integrum* սկզբունքի ապահովումը ենթադրում է, որ գործերի վերաբացումը պետք է կիրառելի լինի բոլոր այն դեպքերում, երբ ֆինանսական հատուցումը չի կարող դիտարկվել որպես խախտմամբ պատճառված վնասի ամբողջական փոխ-

հատուցում:

Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել գործերի վերաբացման առնչությամբ հետևյալ սկզբունքները՝

- **restitutio in integrum.** այս սկզբունքի էությունը տուժողի՝ մինչ խախտումը եղած իրավիճակի վերականգնումն է.

- **բոլոր գործերը վերաբացելու անհրաժեշտության բացակայությունը.** Նախարարների կոմիտեն չի պահանջում անխտիր բոլոր գործերի վերաբացում: Հատկապես քաղաքացիական և վարչական վարույթներում պետությունները կարող են ձեռնարկել այլընտրանքային միջոցառումներ, ինչպիսիք են հատուցումը կամ խախտված իրավունքի վերականգնման այլ տարբերակներ.

- **պետության հայեցողությունը.** Նախարարների կոմիտեն, վերահսկողություն իրականացնելով գործի կատարողական վարույթի նկատմամբ, պետություններին հնարավորություն է ընձեռում որոշելու՝ ինչ միջոցներ ձեռնարկել Եվրոպական դատարանի վճռի կատարման համատեքստում: Վերաբացումն այդ միջոցներից մեկն է, սակայն միակը չէ, և հատուցման այլ եղանակներ նույնպես կարող են կիրառելի և արդյունավետ լինել, որոնք պետք է ունենան առաջնահերթություն գործերի վերաբացման նկատմամբ:

1.4. Restitutio in integrum

Restitutio in integrum սկզբունքը (լատիներենից թարգմանված՝ «նախկին վիճակի վերականգնում») միջազգային իրավունքի կարևորագույն հայեցակարգերից է՝ հատկապես մարդու իրավունքների խախտումների համատեքստում: Սկզբունքի բովանդակությունն այն է, որ պետությունը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցառումները, որպեսզի տուժող կողմը հայտնվի այն իրավիճակում,

որում վերջինս կլիներ, եթե խախտումը տեղի ունեցած չլիներ: Այն փոխկապակցված է լիարժեք հատուցման գաղափարի հետ՝ միտված լինելով հնարավորինս ամբողջությամբ վերացնել անօրինական արարքի հետևանքները:

Հիշյալ սկզբունքը դիտարկելով Եվրոպական դատարանի խախտում արձանագրող վճիռների լույսի ներքո՝ միանշանակ է այն, որ պատասխանող պետության համար երևան է գալիս խախտումը դադարեցնելու և դրա դիմաց հատուցում տրամադրելու իրավական պարտականություն: Թերևս պատասխանող պետության հայեցողական լիազորությունն է ընտրել և ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն հիշյալ պարտավորության ապահովմանը, այդուհանդերձ կարևորն այն է, որ ձեռնարկված միջոցառումների արդյունքում հնարավորինս ապահովվի տուժողի *restitutio in integrum*-ը:

Եվրոպական դատարանի վճիռների կատարման համատեքստում *restitutio in integrum* սկզբունքի ապահովման արդյունավետ եղանակներից է դիտարկվում ներպետական մակարդակում գործերի նոր քննության, ինչպես նաև դատական կարգով գործերի վերաքաջման և (կամ) դրանց վերանայման արդյունավետ պաշտպանության միջոցի տրամադրումը: Ներպետական մակարդակում գործերի վերանայումը կամ վարույթի վերաքաջումը հատկապես կարևորվում է, երբ հնարավոր չէ այլ միջոցներով ապահովել *restitutio in integrum*-ը:

Այս համատեքստում հետաքրքիր է, որ Եվրոպական կոնվենցիան պետությունների վրա պարտավորություն չի դնում իրենց ներպետական օրենսդրությամբ սահմանել գործերի վերանայման կամ վարույթի վերաքաջման հնարավորություն, այդուհանդերձ, գործերի վերանայումը կամ վարույթի վերաքաջումը կարևոր անհատական միջոցառում է, իսկ որոշ դեպքերում միակն է, որը կարող է ապա-

հովել անձի վերադարձը խախտմանը նախորդող իրավիճակին: Այս առնչությամբ, Եվրոպական դատարանն արձանագրում է, որ Եվրոպական կոնվենցիան չի երաշխավորում վարույթի վերաբացման հնարավորությունը: Թերևս Եվրոպական դատարանը հաճախ տրամադրում է ֆինանսական հատուցումներ, *restitutio in integrum*-ը դիտարկվում է որպես ոչ դրամական միջոցառում, որն ուղղակիորեն ուղղված է խախտման իրավական և ընթացակարգային հետևանքները վերացնելուն՝ նպատակ ունենալով կողմին իր գործը վերանայելու հնարավորություն ընձեռել իրավական երաշխիքների ապահովմամբ:

1.5. Խախտում արձանագրող բոլոր գործերի վերաբացման անհրաժեշտության բացակայությունը

Եվրոպական դատարանի և Նախարարների կոմիտեի պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ Նախարարների կոմիտեն վճռի կատարման նկատմամբ իր հսկողական լիազորությունների համատեքստում ձգտում է ապահովել հավասարակշռությունը Եվրոպական դատարանի վճռով արձանագրված պահանջները բավարարելու և այն հանգամանքի միջև, որ վարույթի վերաբացումը միշտ չէ, որ ամենաարդյունավետ և «ամենահարմար» միջոցն է: Ստորև ներկայացված օրինակները հիմնավորում են վերոշարադրյալը:

1.5.1. *Pisano v. Italy*, (զանգապ № 36732/97)

Խախտում. գործը վերաբերում է քաղաքացիական դատավարության ընթացքում ընթացակարգային ձգձգումներին, որոնք հանգեցրել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված ողջամիտ ժամկետի խախտմանը:

Եվրոպական դատարանի դիրքորոշումը. Եվրոպական դատարանը գտավ, որ վերաբացումն անհրաժեշտ չէ, քանի որ դիմումատուին վնաս է կրել ժամկետների ձգձգումների հետևանքով: Եվրոպական դատարանը եզրահանգեց, որ ֆինանսական հատուցումը բավարար է այս դեպքում խախտումը վերացնելու համար:

Նախարարների կոմիտեի մոտեցումը. Կոմիտեն համոզվեց, որ Իտալիան դիմումատուին տրամադրել է դրամական հատուցում և եզրահանգեց, որ քաղաքացիական գործերի վերաբացման անհրաժեշտությունը բացակայում էր՝ հիմք ընդունելով, որ հատուցումը բավարար էր վնասը հարթելու համար⁷:

1.5.2. *Brumarescu v. Romania*, (զանգայր № 28342/95)

Խախտում. Դիմումատուի սեփականության իրավունքը՝ համաձայն թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի, խախտվել է այն բանից հետո, երբ ռումինական դատարանները հետադարձ ուժով չեղարկել են նրա սեփականության իրավունքը:

Եվրոպական դատարանի դիրքորոշումը. սույն խախտման համար Դատարանը պահանջել է տրամադրել փոխհատուցում:

Նախարարների կոմիտեի մոտեցումը. Կոմիտեն երաշխավորվեց, որ Ռումինիան տրամադրել է Դատարանի կողմից սահմանված փոխհատուցումը: Կոմիտեն եզրակացրեց, որ գործի վերաբացումը կարող է խաթարել զույքային վեճերում իրավական որոշակիությունը և փոխհատուցումը բավարար համարեց վնասը վերացնելու հարցում⁸:

⁷ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ *Résolution CM/ResDH(2011)14*:

⁸ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ *Resolution CM/ResDH(2007)90*:

1.5.3. *Sejdovic v. Italy, (գանգալար № 56581/00)*

Խախտում. գործը վերաբերում է քրեական վարույթի շրջանակում հեռավար դատավարությանը, երբ դիմումատուն դատապարտվել էր իր բացակայությամբ՝ հանգեցնելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման:

Եվրոպական դատարանի դիրքորոշումը. թեև Եվրոպական դատարանը գտել է, որ դատավճիռը խախտում է արդար դատաքննության իրավունքը, այդուհանդերձ Դատարանը չի պահանջում քրեական դատավարության ավտոմատ վերաբացում: Եվրոպական դատարանը պաշտպանության միջոցի ընտրության հարցը թողել է իտալական պետության հայեցողությանը՝ գործի վերաբացումը դիտարկելով որպես վճռի կատարման հնարավոր եղանակ, բայց ոչ որպես պարտավորություն:

Նախարարների կոմիտեի մոտեցումը. Նախարարների կոմիտեն հետևել է Իտալիայի իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունավետությանը: Իշխանությունները որոշել են փոխհատուցում առաջարկել, իսկ Կոմիտեն ընդունել է, որ գործի վերաբացման անհրաժեշտությունը բացակայում է՝ հաշվի առնելով, որ այլընտրանքային միջոցներով հնարավոր է եղել շտկել խախտումը⁹:

⁹ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2016)121:

1.6. Անդամ պետությունների հայեցողությունը. գործերի վերաբացման համատեքստում հայեցողական լիազորության հիմնական չափանիշները

Ինչպես վերը նշվեց Եվրոպական կոնվենցիոն համակարգն անդամ պետությունների վրա ուղղակի պարտավորություն չի դնում Եվրոպական դատարանի վճռից հետո պարտադիր վերաբացել իրենց ներպետական վարույթը: Հակառակը, այն որոշակի հայեցողություն է թողնում անդամ պետություններին՝ Դատարանի վճիռը կամ որոշումը կատարելու հարցում: Հայեցողական լիազորությունը պետությանը հնարավորություն է տալիս որոշել կիրառման ենթակա այն լավագույն միջոցները, որոնք ամենահամահունչն են կոնվենցիոն չափանիշներին՝ սեփական իրավական ավանդույթների և գործի կոնկրետ հանգամանքներին: Այլ կերպ ասած, ազգային իշխանությունները սովորաբար ավելի ճիշտ են գնահատում տեղական կարիքներն ու պայմանները՝ ավելի լավ ծանոթ լինելով տեղական իրավիճակին:

Եվրոպական կոնվենցիան ինքնին չի պարունակում որևէ մանրամասներ առ այն՝ ինչպես կատարել Դատարանի կայացրած վճիռը կամ վերացնել արձանագրված խախտումը: Այդուհանդերձ, Եվրոպական դատարանն իր իրավաբանության մեջ վերահաստատում է, որ արձանագրված խախտումներն, ըստ էության, հռչակագրային են, և զուգահեռաբար ճանաչում է պետությունների ազատությունն իրենց ներպետական իրավական համակարգի շրջանակում ընտրել Կոնվենցիայի 46-րդ հոդվածի պահանջները կատարելու նպատակով «պիտանի» միջոցներ:

Այդուհանդերձ, պետության կողմից վճռի կատարմանն ուղղված քայլերի ընտրությունն անսահմանափակ չէ երկու հետևյալ պատճառներով՝

1. դրանք վերահսկվում և գնահատվում են Նախարարների կո-

միտեի կողմից¹⁰.

2. Եվրոպական դատարանն ամբողջապես ձեռնպահ չի մնում վճիռների կատարման հսկողական գործընթացից (օրինակ՝ վերջին տարիներին Դատարանը պնդել է, որ ձեռնարկվող միջոցառումները պետք է համապատասխանեն իր վճիռների եզրափակիչ մասում արված եզրահանգումներին՝ այդպիսով ուրվագծելով պետությունների կողմից ձեռնարկվելիք ընդհանուր և հատուկ միջոցառումները): Տարեցտարի Եվրոպական դատարանն ավելի հաստատուն կերպով է պնդում, որ պետությունները պետք է ձեռնարկեն վճրի կատարման տեսանկյունից **ամենաարդյունավետ միջոցառումները**¹¹:

Ընդհանուր առմամբ, կարելի է առանձնացնել մի շարք **գնահատողական** չափանիշներ, որոնցով անդամ պետությունները պետք է առաջնորդվեն իրենց հայեցողական լիազորությունն իրացնելիս: Այդ չափանիշներից ամենահիմնականներն են՝

- ❖ *Պաշտպանության միջոցների արդյունավետությունը*. Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջն է, որ պետությունը Կոնվենցիայի խախտման համար պետք է ապահովի պաշտպանության արդյունավետ միջոց: Վերաբացման անհրաժեշտությունը գնահատելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը՝ արդյոք առկա այլընտրանքային միջոցները «ունակ են» բավարար չափով շտկելու պատճառված վնասի հետևանքները:
- ❖ *Սուբսիդիարություն և ազգային ինքնիշխանություն*. Եվրոպական դատարանը գործում է սուբսիդիարության սկզբուն-

¹⁰ Եվրոպական կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Նախարարների կոմիտեն վերահսկողություն է իրականացնում Դատարանի վերջնական վճրի կատարման նկատմամբ*:

¹¹ Այս առումով Ուղեցույցի 1.9-րդ ենթաբաժնում առավել մանրամասն անդրադարձ է կատարվում Եվրոպական դատարանի կողմից Նախարարների կոմիտեի հսկողական գործառնությունն հնարավոր «միջամտությանը» և այդ «միջամտության» սահմաններին:

քի հաշվառմամբ, ինչը նշանակում է, որ ներպետական դատարաններն ու իշխանություններն առավել շահեկան դիրքում են մարդու իրավունքների խախտումները հասցեագրելու համար: Հայեցողական լիազորությունը ենթադրում է Եվրոպական դատարանի հարգանքն անդամ պետության ինքնիշխանության նկատմամբ, միաժամանակ պետությունների պարտավորությունը՝ հարգելու և պահպանելու Կոնվենցիայով սահմանված ընդհանուր չափանիշները:

- ❖ *Իրավական որոշակիության և արդարադատության միջև հավասարակշռության սահմանումը*. գործերի վերաբացումը կարող է հակասության մեջ մտնել իրավական որոշակիության սկզբունքի հետ, որի իմաստն այն է, որ երբ դատական ակտը վերջնական մտնում է ուժի մեջ, այն չպետք է հեշտորեն բեկանելի լինի: Պետությունները պետք է հավասարակշռեն այս սկզբունքը մարդու իրավունքների խախտումների վերացման անհրաժեշտության պայմանի հետ: Եվրոպական դատարանը, վերաբացման անհրաժեշտությունը գնահատելիս, հաշվի է առնում այս հանգամանքը:
- ❖ *Համակարգային և անհատական խախտումներ*. հայեցողական լիազորությունը սովորաբար առավել լայն է, երբ խոսքը վերաբերում է համակարգային խախտումներին, երբ պետություններից պահանջվում է իրականացնել օրենսդրական բարելավումներ կամ ռազմավարական փոփոխություններ՝ ի փոխարեն անհատական գործերի վերաբացման: Ընդհանուր առմամբ, անհատական խախտումների դեպքում է, որ վերաբացումը կարող է համարվել ամենապատշաճ պաշտպանության միջոցը:

1.7. Վերաբացման պայմանի առկայությունը Եվրոպական դատարանի վճռում և դրա «հետևանքները»

Ինչպես արձանագրվեց, Եվրոպական կոնվենցիան անդամ պետությունների վրա ուղղակի պարտավորություն չի դնում Եվրոպական դատարանի վճռից հետո վերաբացել քննարկվող գործի ներպետական վարույթը: Ինչ վերաբերում է Եվրոպական դատարանին, ապա այն ևս, որպես կանոն, վերաբացման անհրաժեշտության և դրա արդյունավետության գնահատման հարցը թողնում է Նախարարների կոմիտեին վճռի կատարման նկատմամբ հսկողական իրավասությունն իրականացնելիս: Այդուհանդերձ, Եվրոպական դատարանի պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ երբեմն Դատարանն իր վճռում ուղղակիորեն մատնանշում է, որ տվյալ պայմաններում վերաբացումը կարող է լինել վճռի կատարման ամենաարդյունավետ միջոցը: Մինչդեռ, պետք է նկատել, որ Նախարարների կոմիտեի պրակտիկան այն ուղղությամբ է զարգացել, որ Եվրոպական դատարանի վճռում՝ վերաբացման անհրաժեշտության մասին ակնարկն ամենևին չի ենթադրում գործի մեխանիկական վերաբացում: Միևնույն է, վերաբացման անհրաժեշտության գնահատման հայեցողությունը մնում է անդամ պետությանը՝ կախված վերաբացման անհրաժեշտության գնահատման մի շարք չափանիշներից: Ի դեպ, առկա է նաև հակառակ պրակտիկան, երբ Եվրոպական դատարանն իր վճռում որևէ նշում չի կատարում վերաբացման մասին, սակայն Նախարարների կոմիտեն չի փակում գործի կատարողական վարույթը, քանի դեռ ներպետական մակարդակում գործը չի վերաբացվել:

Ընդհանուր առմամբ ստացվում է, որ՝

1. վերաբացման անհրաժեշտության առնչությամբ Եվրոպա-

կան դատարանի վճռում առկա պայմանը, այնուամենայնիվ, **այն-քանով պարտադիր բնույթ չի կրում, որքանով, եթե վերաբացումը գործնական տեսանկյունից անհրազործելի է, իսկ անդամ պետու-թյունը Նախարարների կոմիտեին այդ մասին բավականաչափ հիմնավոր տեղեկատվություն է տրամադրել, Նախարարների կո-միտեն կարող է փակել գործի կատարողական վարույթը.**

2. վերաբացման անհրաժեշտության առնչությամբ Եվրոպա-կան դատարանի վճռում առկա պայմանի բացակայության դեպքում անգամ **վերաբացումը կարող է համարվել անհրաժեշտ և ամե-նաարդյունավետ միջոցը:**

1.7.1. *Gaspari v. Slovenia, (զանգասար № 21055/03)*

Համառոտ. գործը վերաբերում է քաղաքացիական գործի քննու-թյան ողջամիտ ժամկետների խախտմանը: Մասնավորապես, դիմու-մատուն բողոքել է, որ վարկի մարման վեճի կապակցությամբ քաղա-քացիական դատավարությունը տևել է ավելի քան 10 տարի՝ չնայած մի քանի միջանկյալ դատական ակտերի և բողոքարկումների:

Եվրոպական դատարանի եզրահանգումը. խախտում արձա-նագրող վճռում Եվրոպական դատարանը նշել է, որ չի կարող որևէ ենթադրություն անել առ այն՝ ինչպիսին կլինե՞ր ներպետական վա-րույթի արդյունքը, եթե այն համահունչ լինե՞ր Եվրոպական կոնվեն-ցիայի 6-րդ հոդվածի պահանջներին: Եվրոպական դատարանն ակ-նարկել է, որ սույն գործի պայմաններում խախտման հասցեագրման ամենաարդյունավետ միջոցը կլինի գործի վերաբացումը ներպետա-կան մակարդակում:

Նախարարների կոմիտեի մոտեցումը. Նախարարների կոմի-տեն փակել է գործի կատարողական վարույթն այն դեպքում, երբ, չնայած Եվրոպական դատարանի վճռում առկա «ցուցումներ»-ի,

ներպետական մակարդակում գործն այնուամենայնիվ չի վերաբացվել: Ընդ որում, գործը չվերաբացելու պատճառն այն է եղել, որ Սլովենիայի ներպետական օրենսդրությունը քաղաքացիական դատավարության համար վերաբացման հնարավորություն չի նախատեսում¹²:

*1.7.2. Al-Khawaja and Tahery v. the United Kingdom [GC],
(զանգապներ N°s 26766/05 and 22228/06)*

Համառոտ. սույն գործում դիմումատուներից մեկի դատապարտման հիմքում դրվել է դատավարության ընթացքում չուսումնասիրված ապացույց: Մասնավորապես, սկզբում ոչ մի վկա չի մատնանշել, որ դիմումատուին տեսել է հանցանքի կատարման պահին: Ավելի ուշ, վկաներից մեկը ոստիկանությունում դիմումատուի դեմ ցուցմունք է տվել, սակայն, ըստ հանրային մեղադրողի, չափազանց վախեցած էր դատարան ներկայանալու համար: Գործը քննող դատավորը թույլատրել է հրապարակել վկայի ցուցմունքը երդվյալ ատենակալների առջև: Արդյունքում, դիմումատուի դատապարտման հիմքում դրվել է այս ապացույցը:

Եվրոպական դատարանի եզրահանգումը. Եվրոպական դատարանն այս դրվագով խախտում արձանագրեց՝ ևս մեկ անգամ հաստատելով, որ մեղադրյալները պետք է հնարավորություն ունենան հարցաքննելու իրենց դեմ ցուցմունք տված անձանց:

Նախարարների կոմիտեի մոտեցումը. Նախարարների կոմիտեն փակել է սույն գործի կատարողական վարույթը՝ բավարարվելով միայն, որ կառավարությունը դիմումատուին տրամադրել է արդարացի փոխհատուցում: Միևնույն ժամանակ, կառավարությունը նշել է, որ այլ անհատական միջոցների անհրաժեշտություն չի տեսնում:

¹² Տես Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2018)401:

Դիմումատուն կարող է իր գործի վերանայման դիմում ներկայացնել վերադաս ատյան¹³:

1.7.3. *Yaremenko v. Ukraine (N°2), (զանգալար N° 66338/09)*

Համառոտ. սույն գործում դիմումատուն դատապարտվել էր սպանության և գողության համար. դատապարտման հիմքում հիմնականում ոստիկանական բաժանմունքում հարցաքննվելիս ինքնախոստովանական ցուցմունքներն էին դրված, ընդ որում, դրանք վերցված էին առանց փաստաբանի մասնակցության:

Եվրոպական դատարանի եզրահանգումը. Եվրոպական դատարանը գտավ, որ ցուցմունքները վերցված էին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտմամբ՝ հաստատելով, որ չեն պահպանվել արդար դատաքննության իրավունքի երաշխիքները: Եվրոպական դատարանը խախտում արձանագրող իր վճռում մատնանշեց, որ բոլոր այն դեպքերում, երբ անձը դատապարտվել է այնպիսի դատավարության արդյունքում, որն ինքնին չի համապատասխանում Կոնվենցիայի չափանիշներին, խախտումը հասցեագրելու ամենաարդյունավետ միջոցը գործի վերանայումը կամ վերաքննումն է:

Նախարարների կոմիտեի մոտեցումը. Նախարարների կոմիտեն փակել է սույն գործի կատարողական վարույթը: Հատկանշական է, որ, չնայած Եվրոպական դատարանի վճռում առկա վերաբացման պայմանին, այդուհանդերձ սույն գործով վճիռը չի վերաբացվել: Նախարարների կոմիտեի համար բավարար է եղել ոչ նյութական վնասի, ինչպես նաև ծախսերի և ծախքերի հատուցումը: Անդրադառնալով վերաբացման հարցին՝ Նախարարների կոմիտեն բավարարվել է Կառավարության տրամադրած այն տեղեկությամբ,

¹³ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2012)229:

որ դիմումատուն վերաբացման դիմում չի ներկայացրել¹⁴:

1.7.4. *Guta Tudor Teodorescu v. Romani*, (զանգապ N° 33751/05)

Համառոտ. սույն գործը վերաբերում է Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում նախկինում Ռումինիային պատկանող տարածքից դիմումատուի նախնիներից բռնագրավված սեփականության համար փոխհատուցման որոշումներն անհապաղ չվավերացնելուն:

Եվրոպական դատարանի եզրահանգումը. Եվրոպական դատարանը գտավ, որ խախտվել է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իրավունքն առ այն, որ Ռումինիան ժամանակին չի վավերացրել փոխհատուցման որոշումները, ինչը ֆինանսական վնաս է պատճառել դիմումատուին, այդ թվում՝ ճշգրիտ գնաճի բացակայության պայմաններում:

Վերաբացման պայմանը. Եվրոպական դատարանը խախտում արձանագրող վճռում արձանագրել է, որ պատասխանող պետությունն ունի պարտավորություն վերջ դնել խախտմանը և հատուցել դրա հետևանքներն այնքանով, որքանով տուժած անձը հայտնվի այն իրավիճակում, որում եղել է մինչև խախտումը: Դատարանն իր վճռում գտել է, որ սույն գործով փոխհատուցման տրամադրման ամենաարդյունավետ ճանապարհը կարող է լինել վարույթի վերսկսումը:

Նախարարների կոմիտեի մոտեցումը. Նախարարների կոմիտեն փակել է սույն գործի կատարողական վարույթը: Նախարարների կոմիտեն բավարար է համարել այն տեղեկատվությունը, որ Ռու-

¹⁴ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2022)34, Պատասխանող պետության կողմից ներկայացված գործողությունների հաշվետվությունը՝ Consolidated Action Plan on measures to be taken for implementation of the Court's judgments in the group of cases “Bochan v. Ukraine (No. 2)”

մինիստրի քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նախատեսում է Եվրոպական դատարանի վճռի հիման վրա ներպետական վարույթի վերաբացում¹⁵: Միևնույն ժամանակ, դիմումատուի ժառանգը պահանջել է Եվրոպական դատարանի վճռի թարգմանություն և պաշտոնական մամուլում դրա հրապարակում, ինչը վերջինիս հնարավորություն պետք է տար դիմել վերաբացման¹⁶:

1.8. Վերաբացված վարույթի արդյունքին սպասելու անհրաժեշտության բացակայությունը

Բոլոր այն դեպքերում, երբ խախտումն ամբողջապես հասցեագրվել է նախքան վերաբացված վարույթի ավարտը, Նախարարների կոմիտեն կարող է փակել գործի կատարողական վարույթը առանց սպասելու ներպետական վերաբացված վարույթի ավարտին:

1.8.1. *Mitrov v. “the former Yugoslav Republic of Macedonia”* (գանգալ N° 45959/09)

Համառոտ. մահվան ելքով ճանապարհատրանսպորտային պատահարի առնչությամբ դիմումատուին մեղադրանք է առաջադրվել: Գործը քննող առաջին ատյանի դատարանի նախագահը մահացած տուժողի ծնողն էր: Դիմումատուն միջնորդություն է ներկայացրել, որ իր գործը այլ դատարանում քննվի՝ մտահոգվելով հնարավոր կողմ-

¹⁵ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ *Résolution CM/ResDH(2017)238*:

¹⁶ Տե՛ս Պատասխանող պետության կողմից ներկայացված գործողությունների հաշվետվությունները՝ 1294 réunion (septembre 2017) (DH) - Bilan d'action révisé (14/06/2017) - Communication de la Roumanie concernant l'affaire Guța Tudor Teodorescu contre Roumanie (Requête n° 33751/05) [French only] [DH-DD(2017)677],

1280 réunion (7-9 mars 2017) (DH) - Bilan d'action (16/12/2016) - Communication de la Roumanie concernant l'affaire Guța Tudor Teodorescu contre Roumanie (Requête n° 33751/05) [French only] [DH-DD(2016)1438]

նակալությունից: Սակայն միջնորդությունը մերժվել է այն հիմքով, որ դատավորները հայտարարել են, որ գործը կքննեն անաչառ: Արդյունքում, դիմումատուն մեղավոր է ճանաչվել և դատապարտվել չորսուկես տարվա ազատազրկման, իսկ Վերաքննիչ դատարանը դատավճիռը թողել է անփոփոխ: Դիմումատուն պնդում էր, որ խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը:

Նախարարների կոմիտեի մոտեցումը. սույն գործով Նախարարների կոմիտեն փակել է կատարողական վարույթն այն բանից հետո, երբ գործի վարույթը վերաբացվել է, և սկսել է քննվել անաչառ դատարանի կողմից¹⁷: Փաստորեն, Նախարարների կոմիտեն անհրաժեշտություն չի գտել սպասել վերաբացված վարույթի ավարտին այն հաշվառմամբ, որ վերաբացմամբ արդեն իսկ վճռում արձանագրած խախտումը հասցեագրվում է:

1.8.2. *Naltakyan and others v. Armenia, (զանգապ N° 47448/12)*

Համառոտ. գործը վերաբերում է հանքային ջրերի գործարան կառուցելու նպատակով դիմումատուների սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողերի օտարմանը:

Նախարարների կոմիտեի մոտեցումը. սույն գործի կատարողական վարույթի շրջանակում անհատական միջոցառումների համատեքստում Նախարարների կոմիտեն արձանագրել է, որ պատասխանող պետությունը սահմանված ժամանակահատվածում վճարել է Եվրոպական դատարանի կողմից սահմանած նյութական փաստը: Ներպետական մակարդակում գործը վերաբացվել է և Վճռաբեկ դատարանի վարույթում է: Հաշվի առնելով, որ Վերաբացված վարույ-

¹⁷ Տես Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ *Résolution CM/ResDH(2017)146*:

թի նպատակն է փոխհատուցման տրամադրումը, իսկ Եվրոպական դատարանի սահմանած փոխհատուցումն արդեն իսկ տրամադրվել է դիմումատուներին, հետևաբար, գործը փակելու համատեքստում անհրաժեշտություն չկա սպասել ներպետական գործընթացների զարգացումներին: Հետևաբար, Նախարարների կոմիտեն իր վերջնական բանաձևով փակել է սույն գործի կատարողական-վերահսկողական վարույթը¹⁸:

1.9. Անդամ պետությունների կողմից իրենց վերապահված հայեցողական լիազորության կիրառման դեպքերը՝ հիմնված «գործ առ գործ» (*case by case*) մոտեցման վրա

Եվրոպական դատարանի մի շարք գործերի ուսումնասիրությունը վկայում է, որ Դատարանը պետության հայեցողական լիազորության իրացումը փոխկապակցում է կոնկրետ գործում վերաբացման անհրաժեշտության գնահատման հետ՝ պետություններին հնարավորություն ընձեռելով իրենց ձեռնարկած քայլերը համադրել գործի հանգամանքների հետ: Որոշ դեպքերում վերաբացումը կարող է լինել արձանագրված խախտումն ամբողջությամբ շտկող միակ միջոցը: Այլ դեպքերում կարող է զգացվել առավել լայնամասշտաբ իրավական և օրենսդրական բարեփոխումների կարիք:

Եվրոպական դատարանի և Նախարարների կոմիտեի իրավաբանությունը վկայում է, որ հայեցողական լիազորությունը մեկանգամյա մոտեցում չէ, այլ գործիքակազմ է յուրաքանչյուր գործի հատուկ հանգամանքները, արդարադատությունը և իրավական որոշակիությունը հավասարակշռելու համար: Ստորև ներկայացվում են այն գործերը, որոնցում ասվածը հատկապես վառ է ընդգծված:

¹⁸ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2024)85:

1.9.1. *Ferreira v. Portugal (no. 2), (զանգապ N° 19867/12)*

Համառոտ. սույն գործում դիմումատուն Դատարանի Մեծ պալատի առջև վիճարկում էր այն, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում արձանագրող 2011 թվականի հուլիսի 5-ի վճռից հետո ներպետական դատարանները հրաժարվել են վերաբացել գործը:

Հայեցողական լիազորության դրսևորումը և արդյունքը. գործերի վերաբացման անհրաժեշտության գնահատումը գտնվում է անդամ պետությունների բացառիկ հայեցողության շրջանակում. այս միտքն ընկած է Եվրոպական դատարանի Մեծ պալատի վճռի հիմքում: Մասնավորապես, դատարանը վերահաստատեց, որ Կոնվենցիան ուղղակիորեն չի երաշխավորում գործերի վերաբացումը կամ դրանց վերանայումը՝ միաժամանակ վկայակոչելով անդամ պետությունների միջև միասնական մոտեցման բացակայությունն այս հարցի շուրջ: Դատարանն ընդգծեց, որ 2011 թվականի հուլիսի 5-ի վճռում Պալատն արձանագրել է, որ վարույթի վերաբացումը կամ վերանայումն ըստ էության «խախտման դիմաց հատուցելու «հարմար» միջոց է»: Այսպիսով, վարույթի վերաբացումը կամ գործի վերաքննումը բնութագրվում են **որպես «հարմար» լուծում, սակայն ոչ անհրաժեշտ և բացառիկ**: Ուստի, Դատարանի Պալատը ձեռնպահ է մնացել վճռի կատարմանն ուղղված պարտադիր ցուցումներ տրամադրելուց: Դատարանը չի կարող եզրահանգել, որ Գերագույն դատարանի կողմից 2011 թվականին կայացված վճիռը եղել է անօրինական կամ հանգեցրել է արդարադատության «փլուզմանը»: Նկատի ունենալով սուբսիդիարության սկզբունքը, ինչպես նաև հաշվի առնելով Դատարանի Պալատի 2011 թվականի հուլիսի 5-ի վճիռը՝ Մեծ Պալատը եզրահանգում է, որ Գերագույն դատարանի կողմից

ներպետական վարույթը վերաբացելուց հրաժարվելն ամենևին չի խեղաթյուրում Պալատի վճռում արված եզրահանգումներն ու վճիռն ամբողջությամբ, և որ այդ վճիռը հիմնված է այն հայեցակարգի վրա, որը կոչվում է «մանկրելու սահման», այլ կերպ ասած՝ **հայեցողական լիազորություն**:

*1.9.2. Verein Gegen Tierfabriken Schweiz (VgT) v. Switzerland (N° 2),
(գանգալ N° 32772/02)*

Համառոտ. սույն գործում շվեյցարական հասարակական կազմակերպությանը մերժել են եթեր հեռարձակել գործարանային հողազորությունը քննադատող հեռուստատեսային հոլովակ: Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: Շվեյցարիան հրաժարվել է վերաբացել գործը՝ փոխարենն առաջարկելով հատուցման այլ եղանակներ:

Հայեցողական լիազորության դրսևորումը. շվեյցարական կառավարությունը պնդել է, որ հատուցման այլընտրանքային այնպիսի միջոցները, ինչպիսին է, օրինակ, փոխհատուցումը, ամբողջովին բավարար է խախտումը հասցեագրելու համար: Այդուհանդերձ, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ այս դեպքում գործի վերաբացումը հասարակական կազմակերպության արտահայտվելու ազատության իրավունքի ամբողջական վերականգնման միակ միջոցն էր, քանի որ նախնական խախտումը պայմանավորված էր եթերի հեռարձակման սահմանափակմամբ:

Արդյունքը. Եվրոպական դատարանը վճռեց, որ Շվեյցարիան սահմանազանցել է իր հայեցողական իրավունքը՝ չվերաբացելով գործը, քանի որ վերաբացումն այս պայմաններում միակն էր, որն ամբողջապես «ունակ» էր հասցեագրելու 10-րդ հոդվածի խախտումը: Արդյունքում, Դատարանը վճռել է, որ որոշակի հանգամանքներ

րի պայմաններում վերաբացումը կարող է լինել միակ արդյունավետ միջոցը:

1.9.3. *Salduz v. Turkey, (գանգալար N° 336391/02)*

Համառոտ. դիմումատուին դատապարտվել էր ոստիկանական բաժանմունքում առանց փաստաբանի արված ինքնախոստովանական ցուցմունքի հիման վրա, որն, ըստ Եվրոպական դատարանի, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում էր:

Վերաբացման անհրաժեշտությունը. Այս դեպքում գործի վերաբացումը լավագույն միջոցն է ընթացակարգային խախտումը վերանայելու համար, քանզի դատապարտման հիմքում ընկած ապացույցը ձեռք էր բերվել դիմումատուի իրավունքի խախտմամբ:

Վճռի կատարումը. հիմք ընդունելով վճիռը՝ Թուրքիան փոխեց իր օրենսդրությունը՝ նախատեսելով փաստաբանի ներկայությունը ոստիկանական բաժանմունքում հարցաքննելիս, և վերաբացեց գործը՝ արդար դատաքննության պահանջները բավարարելու նպատակով¹⁹:

1.9.4. *Öcalan v. Turkey, [GC], (գանգալար N° 46221/99)*

Համառոտ. սույն գործում, ի թիվս այլնի, խախտվել էր նաև դիմումատուի 6-րդ հոդվածը, քանի որ տևական ժամանակահատված քրեական վարույթի ընթացքում վերջինիս պաշտպան չէր տրամադրվել, ինչպես նաև քննությունն իրականացվել էր ոչ անաչառ դատարանի կողմից և՛ դիմումատուին, և՛ իր փաստաբանին քրեական գործի նյութերն ուսումնասիրելու հնարավորություն չէր ընձեռվել:

¹⁹ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2018)219:

Վերաբացման անհրաժեշտությունը. Դատարանի ՄԵԾ պալատն իր վճռում մատնանշել է, որ եթե անհատը, ինչպես տվյալ դեպքում, դատապարտվել է դատարանի կողմից, սակայն Կոնվենցիայի անկախության և անկողմնակալության պահանջները բավարարված չեն, ապա գործի վերաբացումը կամ վերաքննումն անհրաժեշտ է, եթե տվյալ դեպքում այն կարող է դիտարկվել որպես վնասի հատուցման բավարար միջոց: Այնուհանդերձ, Կոնվենցիայի 46-րդ հոդվածով նախատեսված իր պարտավորությունները կատարելու համատեքստում պատասխանող պետության կողմից ձեռնարկվելիք միջոցառումները պետք է կախված լինեն առանձին գործի հատուկ հանգամանքներից և որոշվեն Դատարանի վճռի պայմանների լույսի ներքո:

Վճռի կատարումը. Նախարարների կոմիտեն փակել է սույն վճռի կատարողական վարույթն այն դեպքում, երբ ներպետական մակարդակում գործի վերաքննություն չի իրականացվել: Նախարարների կոմիտեն բավարար է համարել այն, որ գործը վերաբացվել է, ինչի արդյունքում ներպետական դատարանը դիտարկել է ներկայացված փաստերն ու գործի նյութերը և եզրակացրել, որ որևէ լրացուցիչ քննության կամ հետագա լուծման իրականացման անհրաժեշտություն չկա²⁰:

1.10. Ներպետական վարույթի վերաբացման համատեքստում Եվրոպական դատարան-Նախարարների կոմիտե «երկխոսությունը»

Ներպետական վարույթի վերաբացման առնչությամբ Եվրոպական դատարանի համապատասխան նախադեպային իրավունքի ուսումնասիրությամբ հնարավոր է շեշտադրել այն, որ խախտում արձանագրող վճռի կատարման հսկողությունը երբեմն կարող է

²⁰ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2007)1:

նաև դուրս գալ Նախարարների կոմիտեի գործառնության տիրույթից: Այսպես, անգամ **Նախարարների կոմիտեի կողմից փակված գործերը որոշ դեպքերում կարող են հայտնվել Եվրոպական դատարանի «տեսադաշտ»-ում**: Արժանահիշատակ է, որ ընդհանուր առմամբ Եվրոպական դատարանը գնահատականներ չի տալիս Նախարարների կոմիտեի կողմից իրականացված հսկողական գործառնության «որակ»-ին, սակայն, եթե հանգում է եզրակացության, որ, այդուհանդերձ, պատասխանող պետությունը թերացել է խախտման ամբողջական վերացմանն ուղղված արդյունավետ քայլեր ձեռնարկելու հարցում, կարող է «յուրովի միջամտել»՝ արձանագրելով նոր խախտում: Կարևոր է նաև ընդգծել, որ Եվրոպական դատարանը կարող է գործը քննել ինչպես այն դեպքում, երբ սկզբնական վճռի կատարողական վարույթը Նախարարների կոմիտեի կողմից փակվել է, այնպես էլ ընթացիկ կատարողական վարույթի պայմաններում:

Ստորև ներկայացված են այն կարևոր գործերը, որոնք հատկապես լույս են սփռում Նախարարների կոմիտե-Եվրոպական դատարան «երկխոսության» վրա:

1.10.1. *Verein Gegen Tierfabriken Schweiz (VgT) v. Switzerland (N° 2), (զանգապ N° 32772/02)*²¹

Համառոտ. դիմումատուի (կենդանիների պաշտպանության կազմակերպություն) օգտին Եվրոպական դատարանը 2001 թվականին կայացրել էր Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում արձանագրող վճիռ առ այն, որ վերջինիս չէր թույլատրվել հեռարձակել գովազդային տեսահոլովակ: Եվրոպական դատարանի սույն վճռի հիման

²¹ Սույն գործը դիտարկվել է նաև Ուղեցույցի 1.7 ենթաբաժնում՝ շեշտադրելով վերաբացման հարցում պետությունների ունեցած հայեցողական լիազորության սահմանները:

վրա դիմումատուին դիմեց ներպետական դատարան՝ հեռարձակման արգելքը վերացնելու նպատակով: Արդյունքում, ներպետական դատարանը մերժեց վերանայման բողոքը՝ պնդելով, որ դիմումատուին պատշաճ կերպով չի հիմնավորել իր պահանջը և ութ տարվա վաղեմության հոլովակի հեռարձակման վերաբերյալ հետաքրքրությունը: Հետագայում, դիմումատուին նոր դիմում ներկայացրեց Եվրոպական դատարան: Ընդ որում՝ Նախարարների կոմիտեն փակել էր 2001 թվականի վճռի կատարողական վարույթը՝ հիմնվելով միայն այն փաստի վրա, որ դիմումատուին տրամադրվել էր արդարացի փոխհատուցում²²:

Եվրոպական դատարանի դիրքորոշումը. վճռում Եվրոպական դատարանն արձանագրել է, որ վճռի կատարման նկատմամբ Նախարարների կոմիտեի հսկողական լիազորությունը չի կանխում նոր խախտման երևան գալն այն դեպքերում, երբ պատասխանող պետությունը տարբերվող հիմքեր է ներկայացնում սկզբնական վճիռը չկատարելու համար: Սույն գործում շվեյցարական դատարանը հրաժարվել է վերաբացել վարույթն այն հիմնավորմամբ, որ շատ ժամանակ անցած լինելու պատճառով դիմումատուին կորցրել է խնդրո առարկա հոլովակը եթեր հեռարձակելու հետաքրքրությունը: Նախարարների կոմիտեն անտեղյակ էր այս հիմնավորումից այն պահին, երբ փակում էր գործի կատարողական վարույթը: Այնինչ, սա կարող էր հանգեցնել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի նոր խախտման:

Այս գործում Եվրոպական դատարանը գտավ, որ Շվեյցարիան ուներ պոզիտիվ պարտավորություն ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ քայլերը տեսահոլովակը եթեր հեռարձակելու համար: Իսկ Շվեյցարիայի դատական աստիճանների կողմից գործի վերաբացումը մերժելը չափազանց ֆորմալ էր և հաշվի չէր առնում այն, որ դիմումատուին

²² Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2024)16:

ինքը կարող էր և պետք է գնահատեր իր տեսահոլովակի ժամանակավրեպ լինելու կամ չլինելու հանգամանքը: Արդյունքում, Եվրոպական դատարանը ևս մեկ անգամ արձանագրեց Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

Արդյունքը. Եվրոպական դատարանի սույն վճիռն ինչ-որ չափով առնչվում է նաև Նախարարների կոմիտեի հսկողական լիազորություններին: Դատարանը հստակեցրեց, որ Կոմիտեի կողմից վճռի կատարողական վարույթի փակումն իր համար խոչընդոտ չէ նախկին խախտման նոր իրավական ասպեկտներ քննարկման առարկա դարձնելու համար:

1.10.2. *V.D v. Croatia (N° 2), (գանգապ N° 19421/15)*

Համառոտ. շիզոֆրենիայով տառապող դիմումատուն ձերբակալվել էր իր ծնողների տանը: 2011 թվականի իր վճռում (գանգապ N° [15526/10](#)) Եվրոպական դատարանն արձանագրել էր Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ինչպես նյութական, այնպես էլ ընթացակարգային ասպեկտների խախտում: Վճռի կատարման շրջանակում ներպետական մակարդակում վերաբացվել էր գործի վարույթը, որը վերաբերում էր դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորման մեջ կասկածվող ոստիկանության և դատախազության աշխատողներին: Դիմումատուն պնդում էր, որ նոր նախաքննությունը չէր իրականացվում Կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջներին համահունչ, իսկ Նախարարների կոմիտեն դեռ չէր ավարտել իր հսկողական գործառույթը:

Եվրոպական դատարանի դիրքորոշումը. նախևառաջ Դատարանը փորձեց համոզվել՝ արդյոք իրավասու է քննել դիմումատուի բողոքն առանց «ոտնձգելու» պատասխանող պետության և Նախարարների կոմիտեի «համագործակցությանը» վճռի կատարման

շրջանակում: Նոր նախաքննությամբ կարիք էր առաջացել ձեռնարկել մի շարք դատավարական գործողություններ, որոնք հանգեցրել էին լրացուցիչ ապացույցների հավաքագրմանը և դիմումատուի գործի վերաբերյալ նոր փաստերի հաստատմանը: Դիմումատուի բողոքը վերաբերում է նոր նախաքննության արդյունավետությանը և դատախազի՝ գործի վարույթը կարճելու որոշմանը: Այս հանգամանքներում նոր նախաքննության ենթադրյալ արդյունավետության բացակայությունը և ավելի կոնկրետ՝ այն սխալները, որոնք դիմումատուի պնդմամբ, խաթարել են վարույթը կարճելու մասին դատախազության որոշումը, նոր տեղեկություններ են՝ ի համեմատ Դատարանի նախորդ վճռի: Քանի որ նախորդ վճռով այս հարցերին անդրադարձ չէր կարող կատարվել, հետևաբար Դատարանն իրավասու է ներկայումս քննարկման առարկա դարձնել դրանք: Իսկ այն փաստը, որ նախնական վճռի նկատմամբ Նախարարների կոմիտեի իրականացված հսկողությունը դեռևս ընթանում էր, չի խոչընդոտում Դատարանին նոր դիմում ընդունել այնքանով, որքանով այն ասպեկտները, որոնց պետք է անդրադարձ կատարվի, առկա չեն եղել նախնական վճռում:

Արդյունքը. Եվրոպական դատարանի սույն վճռի հիմնական կարևորությունն այն է, որ Դատարանն արձանագրեց, որ վճռի կատարման նկատմամբ Նախարարների կոմիտեի կողմից դեռևս ընթացող հսկողությունը չի սահմանափակում իր իրավասությունը քննության առարկա դարձնել գործի նոր ասպեկտները կամ զարգացումները, որոնք նախնական վճռում հասցեագրված չեն եղել:

2. Ներպետական դատական վարույթների վերաբացման անհրաժեշտությունը և անհրաժեշտության բացակայությունը հիմնավորող ընդհանրական հիմքերը, վերաբացմանը խոչընդոտող հանգամանքները և դրա այլընտրանքները

2.1. Վերաբացման անհրաժեշտությունը հիմնավորող ընդհանրական հիմքերը

Եվրոպական դատարանի և Նախարարների կոմիտեի պրակտիկայի ամփոփ ուսումնասիրության արդյունքում հնարավոր է ընդհանրացնել այն դեպքերը, երբ գործի ներպետական վարույթի վերաբացումը, այդուհանդերձ, ողջունվել է և դիտարկվել է որպես խախտման վերացման հնարավոր միակ միջոցը: Մասնավորապես՝

- ❖ *շարունակական լուրջ վնաս, որը ֆինանսական փոխհատուցմամբ չտրված է ենթակա չէ*: որոշ գործերում խախտումը պատճառում է շարունակական վնաս, որը հնարավոր չէ հարթել միայն արդարացի փոխհատուցում տրամադրելով (ֆինանսական հատուցմամբ): Օրինակ՝ անօրինական դատապարտման դեպքում վերաբացումն անհրաժեշտ է համոզվելու համար, որ անձն ազատ է արձակվել:
- ❖ *ընթացակարգային խախտումներ, որոնք կասկածի տակ են դնում դատական ակտի օրինականությունը*: վերաբացման անհրաժեշտություն կարող է նաև առաջանալ վարույթի ընթացքում ընթացակարգային այնպիսի խախտումների առկայության պարագայում, որոնք ստորադասում են տվյալ վարույթի օրինականությունն ու արդարացիությունը: Օրինակ՝

- **ապացույցների ոչ պատշաճ օգտագործումը.** եթե ապացույցները կեղծվել են, թաքցվել կամ ոչ տեղին ընդունվել, ապա դրա արդյունքում «վտանգվում» է արդարադատությունը, ուստի անհրաժեշտ է վարույթի վերանայում.
 - **արդար դատաքննության չիրականացումը.** Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտումները վերաբացման ընդհանուր հիմք են: Օրինակ՝ իրավաբանական օգնության իրավունքի սահմանափակումը, քննության որոշ փուլերից պաշտպանի մասնակցության բացակայությունը, հակընդդեմ հարցման իրավունքի խախտումը.
 - **պաշտպանի բացակայությունը.** եթե դատավարության ընթացքում մեղադրյալը ներկայացված չէ փաստաբանի միջոցով, ապա դատավարության արդարությունն ըստ էության «վտանգված է», ուստի վարույթն անհրաժեշտ է վերաբացել մեղադրյալի իրավունքները երաշխավորելու նպատակով.
- ❖ *Եվրոպական դատարանի կողմից արձանագրված կոպիտ խախտումները, որոնք հարցականի տակ են դնում դատական ակտի արդարացիությունն ու անբեկանելիությունը.* որպես կանոն, վերաբացումն անհրաժեշտ է, երբ Եվրոպական դատարանն իր վճռով վեր է հանում էական իրավաբանական կամ փաստական սխալներ, որոնք կասկած են սփռում ներպետական դատական ակտի արդարացիության և անբեկանելիության վրա: Մասնավորապես՝
- **ազգային կամ միջազգային օրենսդրության ոչ ճիշտ կիրառումը.** երբ Եվրոպական դատարանը բացահայտում է, որ ներպետական դատարանները սխալ են մեկնաբանել կամ սխալ են կիրառել կիրառման ենթակա

օրենսդրությունը, վերաբացումը կարող է անհրաժեշտ լինել դատական ակտի իրավական հիմքը շտկելու նպատակով.

- **կողմնակալությունը.** եթե Դատարանը գտնում է, որ գործը քննող դատական ատյանն անկախ և անկողմնակալ չի եղել, ապա այդ ատյանի կայացրած դատական ակտի օրինականությունն ընկնում է կասկածի տակ, ինչի հետևանքով կարող է վարույթի վերանայման անհրաժեշտություն առաջանալ.
- **կարևոր փաստերի սխալ մեկնաբանումը.** երբ Եվրոպական դատարանն ընդգծում է, որ ներպետական դատարանները կարևոր ապացույցները կամ փաստական հանգամանքները սխալ են մեկնաբանել, ապա վարույթի վերաբացումը կարող է երաշխավորել, որ հաշվի առնվեն ճիշտ ապացույցներ ու փաստեր, կամ դրանք ճիշտ մեկնաբանվեն:

2.2. Դեպքեր, երբ վերաբացումը չի «խրախուսվում»

Եվրոպական կոնվենցիոն համակարգի իրավաբանության ուսումնասիրությունը վկայում է, որ որոշ գործոնների համատեքստում վերաբացումը կամ վերանայումը խախտման վերացման «ցանկալի» միջոցը չէ: Այդ գործոնների թվին կարող են դասվել՝

- **գործնական անիրագործելիությունը.** օրինակ՝ սեփականության իրավունքի վերականգնումը վերաբացման միջոցով կարող է անիրագործելի լինել որոշակի փոփոխություններով, շատ ժամանակ անցած լինելու, և այլ հանգամանքներով պայմանավորված.

- **երրորդ անձանց իրավունքները.** երբ վերաբացման ար-

դյունքում խախտվելու են երրորդ անձանց իրավունքները, հատկապես սեփականության հետ կապված վեճերում, սովորաբար փոխհատուցումն է համարվում լավագույն միջոց՝ ապահովելով իրավական կայունություն.

- **քաղաքական զգայունություն.** գործերի պարագայում, որոնք կապված են քաղաքական կոնֆլիկտների, ազգային անվտանգության կամ զգայուն տարածքային հարցերի հետ, վերաբացման անհրաժեշտությունն ու գործնական իրագործելիությունն առավել քիչ է, քանի որ պայմանավորված ազգային և միջազգային հարաբերությունների լայնամասշտաբությամբ հիշյալ գործերում վերաբացմամբ որևէ արդյունք գրանցելն առավել քիչ հավանական է.

- **զանգվածային խախտումներ կամ համակարգային խնդիրներ.** այն իրավիճակներում, երբ արձանագրվել են համակարգային խնդիրներ, որոնք վերաբերելի են բազմաթիվ մարդկանց, ապա հատուցման տրամադրման հետ զուգակցված անհրաժեշտ են օրենսդրական կամ քաղաքական բարեփոխումներ: Այս մոտեցումն առավել ընդունելի է, քան զուտ անհատական գործի վերաբացումը:

2.2.1. *Assanidze v. Georgia, (զանգալս N° 71503/01)*

Համառոտ. դիմումատուն անօրինական կալանավորվել էր վրացական իշխանությունների կողմից, որոնք հաշվի չէին առել նախկինում վերջինիս արդարացված լինելու հանգամանքը: Դիմումատուն վիճարկել էր իր շարունակական կալանքը՝ որպես 5-րդ հոդվածի խախտում:

Եվրոպական դատարանի մոտեցումը. Եվրոպական դատարանն արձանագրեց 5-րդ հոդվածի խախտում, սակայն գործի վերաբացում չպահանջեց: Փոխարենը, Դատարանը տրամադրեց արդարացի հատուցում:

Վերաբացման անհրաժեշտության բացակայության պատճառը. Նախարարների կոմիտեն փակել է գործի կատարողական վարույթը՝ հիմք ընդունելով, որ դիմումատուն Դատարանի վճռի հաջորդ օրն ազատ է արձակվել, և վերջինիս վճարվել է արդարացի փոխհատուցումը²³:

2.2.2. Papamichalopoulos and Others v. Greece, (զանգալս N° 14556/89)

Համառոտ. դիմումատուները հույն զինվորականների կողմից զրկվել էին իրենց հողատարածքից՝ փորձելով այն հետ ստանալ:

Եվրոպական դատարանի մոտեցումը. Եվրոպական դատարանն արձանագրել է թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում՝ դիմումատուներին տրամադրելով դրամական փոխհատուցում: Դատարանը միևնույն ժամանակ նշել է, որ դիմումատուների հողատարածքը հետ ստանալու համար բավական երկար ժամանակահատված է անցել, որի հետևանքով երևան են եկել գործնական բարդություններ:

Վերաբացման անհրաժեշտության բացակայության պատճառը. Նախարարների կոմիտեն փակել է գործի կատարողական վարույթը²⁴: Սույն գործով վերաբացման անհրաժեշտության բացակայությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ հողատարածքը վերադարձնելը գործնականում անհնար էր (այդ ժամանակահատվածում այն արդեն շահագործվում էր), միևնույն ժամանակ վտանգվելու էին երրորդ անձանց շահերը:

²³ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution ResDH(2006)53:

²⁴ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ RESOLUTION DH (98) 309:

2.2.3. *Loizidou v. Turkey, (զանգապ N° 15318/89)*

Համառոտ. հունա-կիպրացի դիմումատուն Թուրքական բռնազավթումներից հետո կորցրել էր իր սեփականությունը Հյուսիսային Կիպրոսում:

Եվրոպական դատարանի մոտեցումը. Եվրոպական դատարանն արձանագրել է թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում, սակայն գործի վերաբացումը կամ դիմումատուի սեփականության իրավունքի վերականգնումը դիտարկվել է գործնականում անիրագործելի՝ պայմանավորված Հյուսիսային Կիպրոսում տիրող քաղաքական իրավիճակով: Դատարանը տրամադրել է արդարացի փոխհատուցում:

Վերաբացման անիրաժեշտության բացակայության պատճառը. Նախարարների կոմիտեն փակել է գործի կատարողական վարույթը²⁵: Սույն գործով վերաբացման անիրաժեշտության բացակայությունը պայմանավորված էր քաղաքական կոնֆլիկտների և տարածքային վեճերի առկայությամբ, ինչն անհնար էր դարձնում սեփականության իրավունքի վերականգնումը: Հետևաբար, արդարացի փոխհատուցումը համարվեց վճռի կատարման ամենաիրագործելի եղանակը:

2.2.4. *Amuur v. France, (զանգապ N° 19776/92)*

Համառոտ. Նախքան արտաքսումը Սոմալիից փախստականները՝ դիմումատուները, 20 օր շարունակ պահվել էին ֆրանսիական օդանավակայանի տրանզիտ գոտում:

²⁵ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2022)255:

Եվրոպական դատարանի մոտեցումը. Եվրոպական դատարանը գտավ, որ տրանզիտ գոտում դիմումատուների ազատությունից երկարատև զրկումը հանգեցրել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտման:

Վերաբացման անհրաժեշտության բացակայության պատճառը. Նախարարների կոմիտեն փակել է գործի կատարողական վարույթը²⁶՝ հիմք ընդունելով, որ այս դեպքում գործի վերաբացումն անհրաժեշտ էր շատ ժամանակ անցած լինելու պատճառով, իսկ ֆինանսական հատուցումը՝ բավարար խախտված իրավունքների վերականգնման համար:

2.3. Վերաբացմանը խոչընդոտող հանգամանքները

Հարկ է նկատել, որ միշտ չէ, որ գործերի վերաբացումը հանգեցնում է իրավունքների վերականգնման և «բարօրության»: Թերևս այս հաշվառմամբ է, որ ո՛չ Եվրոպական դատարանը, ո՛չ էլ Նախարարների կոմիտեն չեն ողջունում բոլոր գործերի անխտիր մեխանիկական վերաբացումը: Ընդհակառակը, գործերի վերաբացումն ու վարույթի վերսկսումը դիտարկվում են այն դեպքերում, երբ առկա մյուս գործիքակազմն «ունակ չէ» վերականգնելու խախտված իրավունքը: Ինչպես Եվրոպական դատարանի, այնպես էլ Նախարարների կոմիտեի իրավաբանության ուսումնասիրության արդյունքում կարելի է առանձնացնել որոշակի հանգամանքներ, որոնք, այսպես ասած, «խանգարում են», գործերի վերաբացմանը և վարույթի վերաքննմանը ու չեն կարող համարվել իրավունքների վերականգնման արդյունավետ միջոց:

²⁶ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ RESOLUTION DH (98) 307:

2.3.1. Իրավական որոշակիություն *և res judicata*

Իրավական որոշակիության սկզբունքը սերտորեն փոխկապակցված է *res judicata* սկզբունքի հետ, որը երաշխավորում է, որ վերջնական դատական ակտերը պարտադիր ուժ ստանալուց հետո չպետք է հեշտորեն բեկանելի լինեն: Գործի վերաբացումը կարող է «հարվածի տակ դնել» այս սկզբունքները, հատկապես քաղաքացիաիրավական հարաբերությունների պայմաններում, երբ վերաբացումը չպետք է խաթարի երրորդ կողմի իրավունքները և վերջնական վճռի «հեղինակությունը»²⁷:

2.3.1.1. *Tregubenko v. Ukraine, (գանգապ N°61333/00)*

Համառոտ. դիմումատուի օգտին կայացվել էր վերջնական դատական ակտ, որը ներպետական մակարդակում բեկանվել էր այն բանից հետո, երբ գործը վերաբացվել էր դատախազի դիմումի հիման վրա: Վերջնական դատական ակտը չեղարկվել էր:

Եվրոպական դատարանի մոտեցումը. Եվրոպական դատարանը վերջնական դատական ակտի չեղարկումը համարել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում: Դատարանն իր վճռում ընդգծել է իրավական որոշակիության և *res judicata*-ի կարևորությունը՝ նշելով, որ բացառիկ վերանայումը չպետք է օգտագործվի ներպետական դատարանի վճիռների վերջնականությունը շրջանցելու նպատակով:

Վճռի նշանակությունը. սույն վճռում ևս մեկ անգամ արտացոլվեց այն պնդումը, որ վերջնական դատական ակտերը պետք է

²⁷ Պետք է նկատի ունենալ, որ Ուղեցույցի այս հատվածի 2.3.1.1-ից 2.3.2.2 ենթաբաժիններում ներկայացված գործերում վերաբացումը նոր և նոր երևան եկած հանգամանքների հիմքերով ներպետական բացառիկ վերանայումներն են և ոչ թե Եվրոպական դատարանի վճռի կամ որոշման հիմքով վերանայումը:

«հարգվեն» և հեշտորեն բեկանելի չլինեն՝ ապահովելով կողմերի իրավունքները:

2.3.1.2. *Sakhvadze v. Russia, (զանգապ N° 15492/09)*

Համառոտ. քաղաքացիական վարույթի շրջանակում դիմումատուի օգտին կայացվել էր վերջնական դատական ակտ, սակայն ներպետական վերանայման կառուցակարգերի համատեքստում գործը վերաբացվել էր, իսկ դատական ակտը՝ բեկանվել:

Եվրոպական դատարանի մոտեցումը. Եվրոպական դատարանը գտավ, որ Ռուսաստանը խախտել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածը՝ վերջնական դատական ակտի վարույթը վերաբացելով: Եվրոպական դատարանը վերահաստատեց, որ Ռուսաստանում վերանայման կառուցակարգերը ենթակա են բարելավման այնքանով, որքանով դրանք խախտում են իրավական որոշակիության սկզբունքը՝ չլուծելով հստակ և խիստ սահմանափակումներ:

Վճռի նշանակությունը. սույն վճռում ևս մեկ անգամ ընդգծվեց այն, որ պետությունները պետք է սահմանափակեն այն հանգամանքները, որոնց հիման վրա վերջնական դատական ակտերը ենթակա են վերանայման՝ ապահովելով իրավական համակարգի կայունությունը:

2.3.2. *Non reformation in peius* (դիմումատուի վիճակը չվատթարացնելը)

Քրեական գործերում *non reformation in peius* սկզբունքը դիմումատուին պաշտպանում է գործի վերաբացման արդյունքում առավել վատթար իրավիճակում հայտնվելուց: Գործերի վերաբացման նպատակը պետք է լինի ընթացակարգային սխալների և մարդու իրա-

վունքների խախտումների շտկումը և ոչ թե դիմումատուի համար առավել վատ պայմաններ ստեղծելը:

2.3.2.1. *Guerra v. Italy, (գանգալ N° 116/1996/735/932)*

Համառոտ. դատապարտվելուց հետո դիմումատուն դիմել է Եվրոպական դատարան՝ պնդելով, որ Իտալիայում իր գործի վերաբացումը հանգեցրել է առավել վատթար հետևանքների: Գործի վերաբացման արդյունքում իր սկզբնական պատժաչափը խստացվել էր:

Եվրոպական դատարանի մոտեցումը. Եվրոպական դատարանը գտավ, որ Իտալիան խախտել է *non reformation in peius* սկզբունքը՝ առավել խիստ պատժատեսակ սահմանելով գործի վերաբացման արդյունքում: Դատարանը եզրահանգեց, որ վերաբացման նպատակը պետք է լինի ընթացակարգային բացթողումների ու թերությունների ուղղումը, իսկ դիմումատուի պատժի խստացումն ուղղակիորեն հակասում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածին:

Վճռի նշանակությունը. սույն վճռում ընդգծվեց և ամրապնդվեց այն գաղափարը, որ քրեական գործերի վերաբացման արդյունքում դիմումատուն չպետք է հայտնվի առավել վատ իրավիճակում, քան մինչ այդ էր:

2.3.2.2. *Lorefice v. Italy, (գանգալ N° 63446/13)*

Համառոտ. Եվրոպական դատարանի խախտում արձանագրող վճռից հետո դիմումատուի գործը վերաբացվել էր: Սակայն, գործի վերաբացման արդյունքում իտալական դատարանները կիրառեցին առավել խիստ պատժատեսակ, քան նախնականն էր:

Եվրոպական դատարանի մոտեցումը. Եվրոպական դատարանը գտավ, որ դիմումատուի գործի վերաբացումը հանգեցրել է Կոն-

վենցիայի 6-րդ հոդվածի խախտմանն այնքանով, որքանով դիմումատուի վիճակն առավել վատթարացվել է: Դատարանը վերահաստատեց, որ գործերի վերաբացման նպատակը չպետք է լինի պատժի խստացումը:

Վճռի նշանակությունը. սույն վճռով ևս մեկ անգամ հաստատվեց *non reformation in peius* սկզբունքի կարևորությունը:

2.4. Վերաբացման այլընտրանքները

Բոլոր այն դեպքերում, երբ վերաբացումը գործնականում անիրագործելի է կամ նպատակահարմար չէ, վճռի կատարումը կարելի է ապահովել նաև այլընտրանքային եղանակներով: Ստորև ներկայացվում են այդ եղանակները և դրանց վերաբերյալ նախադեպային իրավունքի օրինակները:

2.4.1. Ֆինանսական հատուցումը

Այն դեպքերում, երբ վերաբացումն անիրագործելի է, ապա ֆինանսական հատուցումը կարող է դիտարկվել որպես արդյունավետ այլընտրանք: Սա հատկապես կենսագործելի է քաղաքացիական գործերի պարագայում, երբ վերաբացումը կարող է վտանգել բարեխիղճ երրորդ անձանց շահերը կամ երկրորդել իրավական որոշակիությունը: Օրինակ՝ *Viasu v. Romania* գործով վճռում Եվրոպական դատարանն արձանագրել է դիմումատուի սեփականության իրավունքի խախտում, սակայն վերաբացումը կարող էր վնասել երրորդ անձանց սեփականության իրավունքը: Հետևաբար, վերաբացման փոխարեն ընդունելի է ֆինանսական հատուցման տրամադրումը՝ որպես վնասի հատուցման միջոց՝ պահպանելով իրավական կայունությունը:

Թեպետ, համաձայն ընդհանուր մոտեցման, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ընթացակարգային խախտման դեպքում վերաբացումը նախընտրելի միջոց է, այդուհանդերձ կոնկրետ հանգամանքներով պայմանավորված ֆինանսական հատուցումը կարող է առավել արդյունավետ միջոց համարվել: Օրինակ՝ [*Kingsley v. The United Kingdom*](#) գործով վճռում Դատարանը թերևս արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ընթացակարգային խախտումներ, այդուհանդերձ վճռի կատարման տեսանկյունից բավարարվել է ֆինանսական հատուցման տրամադրմամբ՝ այն հաշվառմամբ, որ այս գործի պարագայում վերաբացումն առաջ էր բերելու իրավական բարդություններ, իսկ վերջնարդյունքը դժվար թե որևէ փոփոխության ենթարկվեր: Իսկ Նախարարների կոմիտեն իր հերթին գործի կատարողական վարույթը փակել է²⁸:

2.4.2. Ներումը կամ համաներումը քրեական գործերով

Քրեական գործերում ներումը կամ համաներումը ևս կարող են դիտարկվել որպես վերաբացման այլընտրանքներ, երբ երևան են գալիս պրակտիկ այնպիսի դժվարություններ, ինչպիսիք են երկար ժամանակ անցած լինելը, ապացույցների կորուստը կամ քաղաքական բարդությունները: Ասվածի վառ օրինակն է [*Findlay v. The United Kingdom*](#) գործով վճիռը. սույն գործով վճռում դիմումատուի դատապարտումը զինվորական դատարանի կողմից համարվեց Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում: Հետագայում Միացյալ Թագավորությունը ներում է շնորհել դիմումատուին, ինչը, որպես անհատական միջոցառում, բավարարեց Նախարարների կոմիտեին գործի կատարողական վարույթը փակելու համար²⁹:

²⁸ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ [Resolution CM/ResDH\(2010\)214](#):

²⁹ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ [RESOLUTION DH \(98\) 11](#):

2.4.3. Այլընտրանքային այլ միջոցները

- **Իրավունքի վերականգնումը.** սխալ դատապարտման դեպքերում կամ երբ խախտվել են անձի քաղաքական իրավունքները, իրավունքի վերականգնումը դիտարկվում է որպես հիմնական արդյունավետ միջոց: Օրինակ՝ *Scoppola v. Italy (No. 2)* գործով դատապարտման արդյունքում խախտվել էր դիմումատուի ընտրելու իրավունքը: Արդյունավետ միջոցն այս գործում դիմումատուի ընտրական իրավունքի կամ այլ քաղաքական իրավունքների վերականգնումն էր առանց գործի վերաքաջման անհրաժեշտության³⁰:

- **Հանրորեն ներողություն խնդրելն ու ճանաչումը.** պաշտոնապես հանրորեն ներողություն խնդրելը կամ սխալի ընդունումը կարող է լինել հատուցման արդյունավետ և խորհրդանշական տեսակ: Օրինակ՝ *Dink v. Turkey* գործի կատարման շրջանակում Թուրքիան հանրորեն ներողություն է խնդրել դիմումատուի ընտանիքից՝ ընդունելով պետության ծախողումը վերջինիս կյանքի պաշտպանության հարցում: Թերևս Նախարարների կոմիտեն դեռևս հսկողություն է իրականացնում գործի կատարողական վարույթի նկատմամբ, այդուհանդերձ, Կոմիտեն ներողություն խնդրելը դրամական հատուցման հետ միաժամանակ դիտարկել է՝ պետության կողմից որպես իր կոնվենցիոն պարտավորությունների կատարում³¹:

- **Օրենսդրական կամ վարչարարական միջոցառումները.** երբեմն, հատկապես համակարգային խախտումների դեպքում օրենսդրական բարեփոխումները կարող են դիտարկվել որպես պատճառված վնասը հասցեագրելու արդյունավետ և լայնամասշտաբ միջոցներ: Օրինակ՝ *D.H. and Others v. Czech Republic* գործով

³⁰ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2011)66:

³¹ URL: <https://hudoc.exec.coe.int/?i=004-37184>

վճռում Դատարանն արձանագրել է համակարգային խնդիր՝ ի դեմս խտրական վերաբերմունքի գնչուների հանդեպ: Նրանք ստիպված էին լինում կրթություն ստանալ հոգեկան խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված հատուկ դպրոցներում: Նախարարների կոմիտեն դեռևս վերահսկում է գործի կատարողական վարույթը: Թերևս Նախարարների կոմիտեն անհատական միջոցների մասով արձանագրել է, որ սույն գործով վերաբացման անհրաժեշտություն չկա, քանի որ բոլոր դիմումատուները դուրս են եկել դպրոցական տարիքից: Հետևաբար, անհատական գործի վերաբացումն առհասարակ արդյունավետ չէր լինելու: Գործի կատարման համատեքստում Չեխիան նախաձեռնել է կրթական համակարգի փոփոխությունների իրականացում հետագա խտրական վերաբերմունքը բացառելու նպատակով³²:

³² URL: <https://hudoc.exec.coe.int/?i=004-31>

3. Քրեական գործերի վերաբացման առանձնահատկություններն ըստ կոնվենցիոն հոդվածների

3.1. Կոնվենցիայի 2-րդ հոդված (կյանքի իրավունքը)

Եվրոպական դատարանը հատկապես կարևորում է ներպետական մակարդակում գործերի վերանայումը Կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգային խախտումների պարագայում՝ սահմանելով նմանատիպ գործերի արդյունավետ քննության շարունակական պարտավորություն: Պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի շրջանակում վերաբացումները հատկապես կարևորվում են այն դեպքերում, երբ պետությունը ծախողում է պատշաճ քննության իրականացումը, որոնք հանգեցնում են քննության ընդհանուր անարդարացիությանը: Հոդվածի համատեքստում վերաբացումը հատկապես կարևորվում է, երբ գործ ունենք իրավապահ մարմինների և զինվորականների գործողությունների հետ:

Nachova and Others v. Bulgaria, (գանգալներ №s 43577/98 and 43579/98)

Գործը վերաբերում է բուլղարական ռազմական ոստիկանության կողմից երկու գնչու տղամարդկանց գնդակահարությանը: Եվրոպական դատարանը հայտնաբերել է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում, այդ թվում՝ արդյունավետ նախաքննություն իրականացնելը ձախողելու պատճառով: Եվրոպական դատարանի վճռի հիման վրա գործի վարույթը վերաբացվել է, ինչը բավարար էր Նախարարների կոմիտեին գործի կատարողական վարույթը փակելու համար³³:

³³ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ *Résolution CM/ResDH(2017)97*:

3.2. Կոնվենցիայի 3-րդ հոդված (խոշտանգումների արգելումը)

Քրեական վարույթի ընթացքում Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտումները կարող են հանգեցնել ներպետական վարույթի վերաբացմանը:

A.A. v. Switzerland, (զանգապ N° 58802/12)

Գործը վերաբերում է Աֆղանստանի քաղաքացու հավանական արտաքսմանը Շվեյցարիայից: Դիմումատուն պնդում էր, որ Աֆղանստան հանձնելու դեպքում ինքը ենթարկվելու է հալածանքի, դատապարտման և դաժան վերաբերմունքի՝ պայմանավորված իր քաղաքական գործունեությամբ և իսլամափոխ լինելու հանգամանքով: Եվրոպական դատարանն արձանագրեց Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում: Վճռի արդյունքում ներպետական դատարանը վերաբացեց գործը և դիմումատուի օգտին վճիռ կայացրեց, որի արդյունքում դիմումատուն ճանաչվեց փախստական և նրան տրամադրվեց Շվեյցարիայում բնակվելու ժամանակավոր թույլտվություն³⁴, որին հաջորդեց գործի կատարողական վարույթի փակումը:

Virabyan v. Armenia, (զանգապ N° 40094/05)

Սույն գործում, ի թիվս Կոնվենցիայի այլ հոդվածների, Եվրոպական դատարանն արձանագրել է նաև դիմումատուի 3-րդ հոդվածի ինչպես ընթացակարգային, այնպես էլ նյութական հայեցակետի խախտում: Մասնավորապես, պետությանը չէր հաջողվել արժանահավատ բացատրություն ներկայացնել դիմումատուի՝ ոստիկանական բաժանմունքում ստացված վնասվածքների համար: Ոչ ամբողջական կատարված նախաքննությամբ պարզվել էր, որ վնասվածքներն իշխանությունների կողմից խոշտանգման արդյունք են: Ինչ վերաբերում է ընթացակարգային ասպեկտին, ապա,

³⁴ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2021)21:

ըստ էության, նախաքննությունը զուրկ էր մանրակրկիտությունից և օբյեկտիվությունից, ինչպես նաև անկախությունից. հիմնվում էր ոստիկանական աշխատակիցների հայտարարությունների և ոչ ադեկվատ բժշկական զեկույցների վրա՝ միաժամանակ անտեսելով դիմումատուների հետևողական և մանրամասն նկարագրությունները:

Խորհրդադրական կարծիք. 2021 թվականի հունվարի 27-ին Վճռաբեկ դատարանը դիմել է Եվրոպական դատարանին խորհրդատվական կարծիք ստանալու խոշտանգումների կամ համարժեք հանցագործությունների համար քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետների և Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի համատեղելիության հարցի վերաբերյալ: Եվրոպական դատարանն իր [խորհրդատվական կարծիքը](#) հրապարակել է 2022 թվականի ապրիլի 26-ին:

Հաջորդիվ՝ 2023 թվականի դեկտեմբերի 22-ին Վճռաբեկ դատարանը մասամբ բավարարում է Գլխավոր դատախազի դիմումն ի դեմ Վերաքննիչ դատարանի դատական ակտի (2019 թվականի հուլիսի 4)³⁵ ոստիկանության երկու աշխատակիցներին մեղավոր համարելով իրենց լիազորությունները չարաշահելու մեջ՝ զուգորդված բռնությամբ: Արդյունքում, Վճռաբեկ դատարանը որոշեց փոխել առաջին ատյանի դատարանի՝ «(...)՝ վաղեմության ժամկետը լրանալու հիման վրա քրեական պատասխանատվությունից ազատելու» ձևակերպումը «առանց պատիժ նշանակելու» ձևակերպմամբ:

Նախարարների կոմիտեի մոտեցումը. Նախարարների կոմիտեն, շեշտադրելով դաժան վերաբերմունքի և ոչ արդյունավետ նախաքննության դեմ պայքարի համատեքստում պատասխանող պետության ձեռնարկած մի շարք քայլերի կարևորությունն, ինչպես նաև սույն գործով առկա զարգացումները, փակեց գործի կատարողական-վերահսկողական վարույթը³⁵:

³⁵ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ CM/Del/Dec(2024)1514/H46-5:

3.3. Կոնվենցիայի 5-րդ հոդված (ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը)

Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համատեքստում գործի վերաբացման անհրաժեշտությունը հիմնավորված լինելու համար կարևոր է, որ անազատության մեջ գտնվող անձն այդ պահին շարունակի գտնվել անազատության մեջ, հակառակ դեպքում վերաբացումը դառնում է ինքնանպատակ. վերաբացումը պետք է լինի գործիք ներպետական մակարդակում դրամական հատուցում ստանալու համար: Այս համատեքստում, եթե անազատության մեջ գտնվող անձը, անգամ եթե վերջինիս կալանավորումն անօրինական էր կամ անհիմն կամ չափազանց երկար, արդեն իսկ ազատ է արձակվել, ապա գործի վերաբացումը չի կարող համարվել արդյունավետ միջոց:

Mitrović v. Serbia, (զանգաղ N° 52142/12)

Գործը վերաբերում է անօրինական կալանավորմանը: Անհատական միջոցառումների շրջանակում դիմումատուին ներում է շնորհվել, որից հետո վերջինս մահացել է: Այդուհանդերձ, դիմումատուի ժառանգները պահանջել են քաղաքացիական գործի վերաբացում նյութական և ոչ նյութական վնասի հատուցման համար: Ներպետական դատարանը նյութական վնասի հատուցման հայցը համարել է ժամկետանց, իսկ ոչ նյութական վնասի պահանջը՝ ժառանգներին ոչ փոխանցելի: Հետևաբար, Նախարարների կոմիտեն փակել է գործի կատարողական վարույթը³⁶:

³⁶ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2020)78:

Bykov v. Russia, (գանգալը № 4378/02)

Գործը վերաբերում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտմանը դիմումատուի ոչ ողջամիտ երկարատև կալանքի համատեքստում: Ներպետական վարույթը վերաբացվել է, իսկ կալանքը թույլատրող դատական ակտերը՝ բեկանվել: Նախարարների կոմիտեն թերևս չի փակել վճռի կատարողական վարույթն այլ խախտումների մասով, սակայն արձանագրել է, որ դիմումատուն ազատ է արձակվել³⁷:

3.4. Կոնվենցիայի 6-րդ հոդված (արդար դատաքննության իրավունքը)

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի քրեական հայեցակետի խախտումը վերացնելու ամենաարդյունավետ միջոցը գործի նոր քննությունը կամ վարույթի վերաբացումն է: Սույն հոդվածի համատեքստում վերաբացումը հատկապես խրախուսվում է հետևյալ դեպքերում՝

- **պաշտպանի բացակայությունը.** եթե վարույթի ընթացքում դիմումատուն ներկայացված չի եղել փաստաբանի միջոցով, ապա Եվրոպական դատարանը կարող է արձանագրել 6-րդ հոդվածի խախտում, որի պայմաններում վերաբացումը կարող է լինել անհրաժեշտ:

Salduz v. Turkey, (գանգալը № 36391/02)

Սույն գործով Եվրոպական դատարանը վճռում գտավ, որ դիմումատուի արդար դատաքննության իրավունքը խախտվել է, երբ ոստիկանությունում հարցաքննելիս վերջինիս փաստաբան չեն տրամադրել: Որպես արդյունք, Թուրքիան վերանայեց իր օրենսդրությունը՝ նախատեսելով հարցաքննության ընթացքում փաստաբանի ներկայության պայման, իսկ սույն գործը վերաբացվեց³⁸:

³⁷ URL: <https://hudoc.exec.coe.int/?i=004-13645>

³⁸ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2018)219:

• **Կեղծ ապացույցներ ներկայացնելը.** հաճախ երևան է գալիս Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, երբ դատապարտման համար առանցքային նշանակություն ունեցող ապացույցները կեղծվել են կամ ձեռք են բերվել ամբաստանյալի իրավունքների խախտմամբ (օրինակ՝ անօրինական խուզարկությունների և հարկադիր ինքնախոստովանական ցուցմունքների արդյունքում): Նմանատիպ ընթացակարգային խախտումները կասկածի տակ են դնում ներպետական դատական ակտը, ինչի պատճառով էլ կարող է գործի վերաբացման անհրաժեշտություն առաջանալ:

Erkapić v. Croatia, (գանգալը № 51198/08)

Գործը վերաբերում է համամեղադրյալի ցուցմունքների հիման վրա դատապարտված լինելուն, որոնք առաջին ատյանի դատարանի կողմից դրվել են դատավճռի հիմքում առանց դրանց հավաստիության և ճշգրտության ստուգման՝ չնայած այդ ցուցմունքները բռնությամբ կորզված լինելու պնդումներին: Վերաբացված վարույթում դատարանն արդարացրել է դիմումատուին ապացույցների բացակայության հիմքով³⁹:

Barbera, Messegue and Jabardo v. Spain, (գանգալներ №s10590/83 and 06/12/1988)

Սույն գործով Դատարանի կողմից արձանագրվել է խախտում, առ այն, որ գործի համար նշանակություն ունեցող ապացույցները պատշաճ քննության չեն արժանացել դատավարության ընթացքում: Եվրոպական դատարանի վճռից հետո ներպետական դատարանները վերաբացել են գործի վարույթը, որի ընթացքում դիմումատուներն արդարացվել են բավարար ապացույցներ չլինելու հիմքով⁴⁰:

³⁹ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Résolution CM/ResDH(2021)148:

⁴⁰ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH (1994)84:

- **դատական կողմնակալությունը.** եթե Եվրոպական դատա-
րանը հանգի եզրակացության, որ առկա է եղել դատական կողմնա-
կալություն կամ անկողմնակալության պակաս, վերաբացումը կարող
է անհրաժեշտ համարվել դիմումատուի՝ արդար և անաչառ դատա-
րանի առջև լսված լինելու իրավունքի ապահովման տեսանկյունից:

Daktaras v. Lithuania, (գանգալներ N^os 42095/98 և 10/10/2000)

Սույն գործում ներպետական դատարանն օբյեկտիվ մտավա-
խությունների պատճառով անաչառ քննություն չէր իրականացրել,
ինչի արդյունքում վերադաս դատարանը հանձնարարել էր, թե
ինչպիսի վճիռ պետք է կայացվեր: Եվրոպական դատարանն ար-
ձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, որից հետո
գործի վարույթը վերաբացվել է, գործը վերանայվել է և իրակա-
նացվել է օբյեկտիվ քննություն առանց որևէ հանձնարարականնե-
րի և ցուցումների⁴¹:

- **վկաների հարցաքննություն.** եթե Եվրոպական դատարանը
հանգի եզրակացության, որ ներպետական վարույթն իրականացվել
է վկաներին հարցաքննելու իրավունքի անհիմն սահմանափակում-
ներով, ապա ներպետական գործի վերաբացումը կամ վարույթի վե-
րաքննումը կարող է դիտարկվել անհրաժեշտ:

⁴¹ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Résolution ResDH(2004)43:

Manucharyan v. Armenia, (զանգալար № 35688/11⁴²)

Գործը վերաբերում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետի (հակընդդեմ հարցման իրավունք) խախտմանը առ այն, որ դիմումատուն դատապարտվել է սպանության համար՝ դատավարության ոչ մի փուլում հնարավորություն չունենալով հակընդդեմ հարցման ենթարկել նախաքննության ընթացքում իր դեմ ցուցմունք տված միակ ակննատես վկային այն դեպքում, երբ դատապարտման հիմքում դրվել են հենց այս վկայի ցուցմունքները:

Եվրոպական դատարանի վճռի հիման վրա ներպետական իշխանությունները վերաբացել են գործի վարույթը և ուղարկել առաջին ատյանի դատարան նոր քննության: Արդյունքում, ներպետական իրավասու մարմինները բացահայտել են բացակայող վկայի գտնվելու վայրը: Վերաբացված վարույթում նրա նոր գրավոր ցուցմունքները քննվել են ներպետական դատարանների կողմից: Նախարարների կոմիտեն փակել է գործի կատարողական-վերահսկողական վարույթն իր վերջնական բանաձևով՝ հատուկ մատնանշելով, որ բավարար է համարում այն, որ պետության կողմից ձեռնարկված անհատական միջոցառումների համատեքստում վարույթը վերաբացվել է և դատարանները ուսումնասիրել են վկայի գրավոր նոր ցուցմունքը⁴³:

⁴² Սույն գործը Նախարարների կոմիտեի կողմից ընդգրկվել է *Գաբրիելյան խումբ* գործերում: Ընդ որում՝ այս խումբ գործերի մեծամասնության կատարողական-վերահսկողական վարույթները դեռևս փակված չեն:

⁴³ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2024)175:

3.5. Կոնվենցիայի 7-րդ հոդված (պատիժ բացառապես օրենքի հիման վրա)

Սույն հոդվածն արգելում է քրեական օրենքի հետադարձ կիրառելիությունը և երաշխավորում, որ անձինք չդատապարտվեն այնպիսի արարքի համար, որը կատարման պահին հանցագործություն չի համարվել: Սույն հոդվածի համատեքստում վերաբացումը, որպես կանոն, անհրաժեշտ է, երբ Եվրոպական դատարանն արձանագրում է հոդվածի խախտում հետևյալ պատճառներով՝

- **օրենսդրության սխալ կիրառում.** եթե անձի դատապարտման հիմքում ընկած է այնպիսի օրենսդրություն, որն այդ ժամանակահատվածում կիրառելի չէր կամ եթե օրենքին տրվել է հետադարձ ուժ, Եվրոպական դատարանը կարող է արձանագրել Կոնվենցիայի 7-րդ հոդվածի խախտում: Նմանաբնույթ դեպքերում վերաբացումն անհրաժեշտ է երաշխավորելու համար, որ անձն անօրինական պատիժ չի կրում:

Maktouf and Damjanović v. Bosnia and Herzegovina (GC), (զանգայրներ № 2312/08 և 34179/08)

Սույն գործում դիմումատուի նկատմամբ նշանակվել է առավել ծանր պատժատեսակ, քան կիրառելի էր հանցագործության կատարման պահին գործող քրեական օրենսդրությամբ: Վերաբացման արդյունքում, դիմումատուի նկատմամբ կիրառվեց առավել մեղմ օրենսդրություն⁴⁴:

- **անորոշ կամ ոչ հստակ օրենսդրություն.** Կոնվենցիայի 7-րդ հոդվածի կիրառման շրջանակը նաև տարածվում է այնպիսի դատապարտումների վրա, որոնք հիմնված են անորոշ կամ ոչ հստակ օրենսդրության վրա:

⁴⁴ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2017)180:

Dragotoni u et Militaru-Pidhorni v. Romania, (գանգապններ N°s 77193/01 և 77196/01)

Գործն այն մասին է, որ դիմումատուի կողմից կատարված արարքները կանխատեսելիորեն չէին կարող համարվել հանցագործություն՝ տվյալ ժամանակահատվածում ուժի մեջ գտնվող ներպետական օրենսդրության համաձայն: Ներպետական դատարանները, վերաբացելով գործի վարույթը, դիմումատուին արդարացրել են⁴⁵:

⁴⁵ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2011)250:

4. Քաղաքացիական և վարչական գործերի վերաբացման առանձնահատկություններն ըստ կոնվենցիոն հոդվածների

Քաղաքացիական և վարչական գործերի դեպքում, որոնք, մասնավորապես, առնչվում են մասնավոր կողմերի միջև վեճերին, ակնհայտ է, որ վերաբացումը կարող է չհամատեղվել իրավական որոշակիության սկզբունքի հետ այն հաշվառմամբ, որ վտանգվում են բարեխիղճ երրորդ կողմի իրավունքները: Այս գործերի պարագայում հիմնական առանձնահատկությունն այն է, որ պատճառված վնասը կարող է համարժեք հատուցվել այլընտրանքային եղանակով, օրինակ՝ արդարացի փոխհատուցմամբ: Այդուհանդերձ, կախված գործի կոնկրետ հանգամանքներից քաղաքացիական և վարչական գործերում վերաբացումը կարող է նաև համարվել արդյունավետ միջոց:

4.1. Կոնվենցիայի 6-րդ հոդված (արդար դատաքննության իրավունքը)

Կոնվենցիայի 6-րդ հոդվածը կենտրոնական դեր ունի քաղաքացիական արդարադատության և յուրաքանչյուր անձի արդար դատաքննության երաշխավորման համատեքստում: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի քաղաքացիական հայեցակետի խախտումները, որպես կանոն, արձանագրվում են, հետևյալ դեպքերում՝

- **ապացույցների հասանելիության բացակայություն.** երբ մի կողմին մերժում են կարևոր ապացույցներ ներկայացնելու հարցում, ապա «վտանգվում է» դատավարության արդարացիությունը՝ հանգեցնելով հավասար հնարավորություններ ունենալու կողմերի դատավարական իրավունքի խախտմանը.

- **բոլոր կողմերին չլսելը.** արդար դատաքննության հիմնական սկզբունքներից է յուրաքանչյուր կողմի լսված լինելու և իրենց դեմ ներկայացված ապացույցները վիճարկելու իրավունքը: Եթե դատարանը հրաժարվում է այս իրավունքների իրացումից, ապա առկա է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում:

- **կողմնակալություն.** Կոնվենցիայի 6-րդ հոդվածը պահանջում է, որ դատավորներն ու դատարանները մնան անաչառ և անկախ: Կողմնակալության վերաբերյալ կասկածներն անգամ կարող են հանգեցնել դատական ակտի անարդարացիությանը, որի դեպքում էլ վերաբացման անհրաժեշտություն կառաջանա:

San Leonard Band Club v. Malta, (զանգալը № 77562/01)

Սույն գործում Եվրոպական դատարանը վճռով արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում՝ դատարանի անաչառ չլինելու հիմքով, քանի որ միևնույն դատավորը գործը քննել է ինչպես առաջին, այնպես էլ վերաքննիչ դատարանում: Արդյունքում վարույթը վերաբացվել է, գործը քննվել է դատարանի նոր կազմով⁴⁶:

4.2. Կոնվենցիայի 8-րդ հոդված (անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը)

Քաղաքացիական և վարչական հարաբերությունների համատեքստում 8-րդ հոդվածի խախտումները, որոնք կարող են հանգեցնել գործերի վերաբացման, հետևյալներն են՝

- **ընտանեկան վեճեր.** խնամակալության, ամուսնալուծության, որդեգրման հետ կապված վեճերի առնչությամբ Դատարանը կարող է 8-րդ հոդվածի խախտում արձանագրել հատկապես, երբ

⁴⁶ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Résolution CM/ResDH(2013)146:

ներպետական ատյանները չեն հավասարակշռում երեխայի լավագույն շահը ծնողների շահերի հետ: Եթե, օրինակ՝ դատարանի որոշումն անօրինական կերպով հանգեցրել է ծնողի խնամակալության իրավունքից զրկմանը, ապա նման դեպքերում վերաբացումը կարող է անհրաժեշտ լինել:

- **անձնական կյանքը հարգելու իրավունքի խախտումներ.**

քաղաքացիական վարույթը, որ ենթադրում է միջամտություն անհատի անձնական կյանքին, օրինակ՝ չարտոնված հսկողությունը, խուզարկությունը, անձնական տեղեկատվության անօրինական բացահայտումը, խախտում են Կոնվենցիայի 8-րդ հոդվածը: Այս դեպքերում սովորաբար պահանջվում է վերաբացում վերագնահատելու համար համապատասխան պաշտպանության միջոցներ տրամադրելու նպատակահարմարությունը:

Garnaga v. Ukraine, (զանգապ N° 20390/07)

Գործը վերաբերում է դիմումատուի՝ իր հայրանունը փոխելու դիմումի մերժմանը: Վերաբացված վարույթի արդյունքում ներպետական դատարանները պարտավորեցրին Քաղաքացիական ակտերի գրանցման գործակալությանը գրանցել դիմումատուի նոր հայրանունը⁴⁷:

Saviny v. Ukraine, (զանգապ N° 39948/06)

Սույն գործով որոշում է կայացվել երեք երեխաներին առանձնացնել իրենց կույր ծնողներից և նրանց տեղափոխել տարբեր հաստատություններում՝ սահմանափակելով երեխաների շփումը ծնողների և միմյանց հետ: Գործի վերաբացման արդյունքում երեխաներին թույլատրեցին վերադառնալ իրենց մոր մոտ⁴⁸:

⁴⁷ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2020)355:

⁴⁸ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2018)39:

4.3. Կոնվենցիայի 9-րդ հոդված (մտքի, խղճի և կրոնի ազատությունը)

Քաղաքացիական և վարչական վարույթի շրջանակում Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտումները հիմնականում ունենում են հետևյալ դրսևորումները՝

- **աշխատավայրում կրոնական ազատությունը.** աշխատավայրում կրոնական խտրականության դրսևորման դեպքերում կարող է պահանջվել գործերի վերաբացում.
- **հավատքի դրսևորում հասարակական կյանքում.** այն գործերը, երբ երկրի իրավակարգավորումները կամ մասնավոր սուբյեկտների գործողություններն անարդարացի կերպով սահմանափակում են կրոնական դրսևորումները հասարակական վայրերում, նույնպես կարող են հանգեցնել գործերի վերաբացմանը՝ վերագնահատելու՝ արդյոք սահմանափակումները համահունչ են եղել անձի իրավունքների հետ:

Manoussakis and others v. Greece, (զանգապ N° 18748/91)

Գործը վերաբերում է Եհովայի վկայի դատապարտմանն այն պատճառով, որ վերջինս հիմնել է երկրպագության վայր առանց նախնական վարչական թույլտվության: Վարույթի վերաբացման արդյունքում դիմումատուն արդարացվել է⁴⁹:

⁴⁹ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution ResDH(2005)87:

Serif v. Greece, (զանգապ N° 38178/97)

Գործը վերաբերում է մոֆթիի դատապարտմանը՝ «հայտնի կրոնի» ծառայողի գործառույթներն իրացնելու և իրենց համազգեստը կրելու համար: Արդյունքում Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում՝ մատնանշելով, որ սահմանափակվել է դիմումատուի՝ կրոնը պաշտամունքի և քարոզչության միջոցով արտահայտելու ազատության իրավունքը: Դատարանը սահմանել է նյութական և ոչ նյութական վնասի հատուցում:

Եվրոպական դատարանի վճռի հիման վրա դիմումատուն ներկայացրել է վերաբացման դիմում, որը ներպետական ատյաններում բավարարվել է: Արդյունքում դիմումատուի դատապարտումը չեղարկվել է: Նախարարների կոմիտեն, հաշվի առնելով պետության կողմից ձեռնարկված անհատական միջոցառումները, մասնավորապես՝ գործի վերաբացումն ու արդարացի փոխհատուցման տրամադրումը, փակել է գործի կատարողական վարույթը⁵⁰:

4.4. Կոնվենցիայի 10-րդ հոդված (արտահայտվելու ազատությունը)

Քաղաքացիական և վարչական վարույթի շրջանակում Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտումները հիմնականում ունենում են հետևյալ դրսևորումները՝

- **զրպարտության դեպքեր.** զրպարտության առնչությամբ գործերը հատկապես ներառում են դեպքեր, երբ անհատները կամ լրատվամիջոցները դատապարտվում են կարծիք արտահայտելու կամ ուրիշի հեղինակությանը վնասող տեղեկատվություն հրապարակելու համար: Վերաբացումը կարող է անհրաժեշտ լինել, եթե

⁵⁰ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ [Resolution ResDH\(2005\)88](#):

ներպետական դատարանն անարդարացիորեն սահմանափակել է դիմումատուի արտահայտվելու ազատությունը.

- **գեղարվեստական և քաղաքական դրսևորում.** գեղարվեստական ստեղծագործությունների, քաղաքական խոսքի կամ լրատվամիջոցների հրապարակումների նկատմամբ կիրառվող սահմանափակումները կարող են խախտել Կոնվենցիայի 10-րդ հոդվածը, եթե դրանք համաչափ կամ արդարացված չեն ժողովրդավարական հասարակությունում: Նման դեպքերում գործի վերաբացումը կարող է ապահովել, որ դատարանները պատշաճ կերպով հաշվի առնեն խոսքի ազատության կարևորությունը:

Uj v. Hungary, (գանգալ N° 23954/10)

Սույն գործում լրագրողը դատապարտվել էր այն բանի համար, որ քննադատել էր պետական ընկերությանը պատկանող գինու արտադրությունը: Քննադատությունը հիմնականում միտված էր պետական սեփականության թերությունների մասին իրազեկվածության բարձրացմանը և ոչ թե ընկերության արտադրանքի որակը նսեմացնելուն: Վերաբացված վարույթի արդյունքում դատավճիռը բեկանվեց, իսկ լրագրողը՝ արդարացվեց⁵¹:

4.5. Կոնվենցիայի 14-րդ հոդված (խտրականության արգելումը)

Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտումները ևս կարող են հանգեցնել ներպետական վարույթի վերաբացմանը, եթե այն դիտարկվում է որպես վճռի կատարման արդյունավետ միջոց:

⁵¹ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2022)70:

Paraskeva Todorova v. Bulgaria, (գանգալար № 37193/07)

Սույն գործում դիմումատուի պատժի կրումը չի կասեցվել այն պատճառով, որ վերջինս ուներ գնչուական ծագում: Վերաբացված վարույթի արդյունքում ներպետական դատարանները կասեցրին պատժի կրումը⁵²:

Emel Boyraz v. Turkey, (գանգալար № 61960/08)

Սույն գործում դիմումատուն ազատվել է իր զբաղեցրած աշխատանքից «տղամարդ չլինելու» և «զինվորական ծառայություն անցած չլինելու» չափանիշներին չբավարարելու համար: Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում 8-րդ հոդվածի հետ զուգակցված: Վերաբացված վարույթի արդյունքում դիմումատուն հետ է ընդունվել աշխատանքի⁵³:

4.6. Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված (սեփականության պաշտպանությունը)

Անձի սեփականության պաշտպանության իրավունքի համատեքստում գործերի վերաբացման անհրաժեշտության հարցը բավական «նուրբ» է: Սովորաբար այս դեպքերում առավել նախընտրելի է վճռի կատարման այլ միջոցների ձեռնարկումը, քան գործի վերաբացումը՝ պայմանավորված երրորդ անձանց շահերի վտանգմամբ, ինչպես նաև վեճի առարկա գույքի անհասանելի լինելու հանգամանքով (օրինակ՝ վեճի առարկա հողակտորը տիրապետում է բարեխիղճ երրորդ անձը կամ շինությունը քանդվել է): Այդուհանդերձ, Եվրոպական դատարանի և Նախարարների կոմիտեի իրավաբանության

⁵² Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2016)156:

⁵³ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2017)147:

ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրակացնել, որ սույն հոդվածի շրջանակում հետևյալ դեպքերում վերաբացումը կարող է համարվել արդյունավետ միջոց՝

- եթե վեճի առարկա գույքը հասանելի է, հատկապես շարժական գույքի պարագայում. և
- վերաբացմամբ չեն վտանգվելու բարեխիղճ երրորդ անձանց իրավունքները:

Waldemar Nowakowski v. Poland, (գանգալը N° 55167/11)

Գործը վերաբերում է անտիկ զենքերի անհամաչափ բռնագրավմանը: Վերաբացված վարույթի շրջանակում ներպետական դատարանները բեկանեցին անտիկ հավաքածուն բռնագրավելու որոշումը՝ դրանք վերադարձնելով դիմումատուին⁵⁴:

Lelas v. Croatia, (գանգալը N° 55555/08)

Գործը վերաբերում է ականազերծման գործողություններին մասնակցած խորվաթ զինծառայողի, ում պետությունը հրաժարվել է վճարել նպաստները՝ դրանք համարելով ժամկետանց: Արդյունքում Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում՝ մատնանշելով, որ ապօրինի սահմանափակվել է դիմումատուի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքը:

Ներպետական մակարդակում գործը վերաբացվել է, կայացվել է որոշում, որով դիմումատուին հատկացվել են դրամական նպաստները: Նախարարների կոմիտեն այս հաշվառմամբ փակել է գործի կատարողական վարույթը⁵⁵:

⁵⁴ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ [Resolution CM/ResDH\(2015\)165](#):

⁵⁵ Տե՛ս Կառավարության ներկայացված գործողությունների հաշվետվությունը՝ [Action Report DH-DD\(2012\)1042](#) և Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ [Resolution CM/ResDH\(2014\)230](#):

Osmanyany and Amiraghyany v Armenia, (գանգալար N° 71306/11)

Գործը վերաբերում է իրենց ապրուստը գյուղատնտեսությամբ ապահովող դիմումատուներին, որոնց սեփականության իրավունքով պատկանող վարելահողն օտարվել է պղնձամոլիբդենային շահագործման ծրագրի արդյունքում: Արդյունքում, Եվրոպական դատարանն արձանագրել է թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում առ այն, որ դիմումատուները հիշյալ օտարման արդյունքում կորցրել էին իրենց եկամտի հիմնական աղբյուրը, ինչը հաշվի չէր առնվել ներպետական դատարանների կողմից օտարման դիմաց փոխհատուցման չափ սահմանելիս:

Նախարարների կոմիտեն վերջնական բանաձևով փակել է գործի կատարողական-վերահսկողական վարույթն առանց ներպետական մակարդակում գործը վերաբացման կամ դրա վերանայման՝ հիմք ընդունելով, որ Եվրոպական դատարանի կողմից սահմանված ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական վնասը պատասխանող պետությունը ժամանակին հատուցել է⁵⁶:

Tunyan and others v Armenia, (գանգալար N° 22812/05)

Պետության կողմից դիմումատուներին պատկանող բնակարանի օտարման առնչությամբ Եվրոպական դատարանն արձանագրել է թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում այնքանով, որքանով պատասխանող պետությունը սեփականության օտարումը չի իրականացրել «օրենքով նախատեսված պայմանների» պահպանմամբ:

⁵⁶ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2022) 287:

Նախարարների կոմիտեի կողմից, հաշվի առնելով խախտման միատեսակ բնույթն ու փաստական հանգամանքների նմանությունը, սույն գործը դասակարգել է Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի գործի խմբի ներքո, որոնց կատարողական-վերահսկողական վարույթները փակվել են Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևով⁵⁷ այն բանից հետո, երբ Կոմիտեն համոզվել է, որ պետությունը ժամանակին դիմումատուներին տրամադրել է Եվրոպական դատարանի կողմից սահմանված արդարացի փոխհատուցումը:

Կարևոր է ընդգծել, որ վերոնշյալ բանաձևով փակվել է նաև Թունյանը և այլք ընդդեմ Հայաստանի գործի կատարողական-վերահսկողական վարույթը՝ չնայած այն հանգամանքի, որ սույն գործով դիմումատուները դիմել էին Վճռաբեկ դատարան՝ խնդրելով նոր հանգամանքի հիմքով վերաբացել գործի վարույթը: Ընդ որում՝ Վճռաբեկ դատարանը վարույթը վերաբացել էր և ուղարկել նոր քննության: Այդուհանդերձ, Նախարարների կոմիտեն, չսպասելով վերաբացված գործի հնարավոր ընթացքին և արդյունքին, փակել է վերջնական բանաձևով նաև այս գործի վերահսկողությունը՝ համարելով, որ արդարացի փոխհատուցում տրամադրելով պատասխանող պետությունը, ըստ էության, կատարել է Կոնվենցիայի 46-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունները:

⁵⁷ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական բանաձևը՝ Resolution CM/ResDH(2015)191:

5. Գործերի վերաբացման առանձնահատկությունները կողմերի միջև ձեռք բերված բարեկամական կարգավորման կամ պետության կողմից հաստատված միակողմանի հայտարարության առկայության պայմաններում

5.1. Եվրոպական կոնվենցիոն համակարգի զարգացումներն ու առանձնահատկությունները

2019 թվականից ի վեր՝ Կոպենհագենի հռչակագրին⁵⁸ համընթաց Եվրոպական դատարանը խրախուսում է վեճերի կարգավորման բանակցային գործընթացը (բարեկամական կարգավորումներ, միակողմանի հայտարարություններ): Այս կապակցությամբ, պայմանավորված մի շարք հանգամանքներով՝ այդ թվում՝ սեփական ծանրաբեռնվածության նվազման գործոնով, Եվրոպական դատարանի կողմից բանակցային գործընթացները տարեցտարի ողջունվում են: Այդուհանդերձ, Եվրոպական դատարանը որդեգրել է այնպիսի մոտեցում, ըստ որի՝ այս գործընթացները չպետք է խոչընդոտեն կամ որոշակի առումով սահմանափակեն անձանց խախտված իրավունքների հնարավոր ամբողջական վերականգնումը և անդամ պետությունների կողմից հնարավոր ամենաարդյունավետ միջոցների ընտրությունն ու կիրառումը:

Այսպես, այս առնչությամբ Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում զարգացրել է այն գաղափարը, որ բարեկամական կարգավորման կամ միակողմանի հայտարարության առկա-

⁵⁸ 2018 թվականի ապրիլի 13-ին Եվրոպայի խորհրդի բոլոր 47 անդամ պետություններն ընդունել են Կոպենհագենի հռչակագիրը:

յության դեպքում գանգատը գործերի ցուցակից հանելու որոշում կայացնելիս նման որոշումն ինքնին չի սահմանափակում դիմումատուի կողմից ազգային մակարդակում իր խախտված իրավունքների վերականգնման համար արդյունավետ պաշտպանության միջոցներին դիմելու հնարավորությունը: Ավելին, այս գործերով Եվրոպական դատարանը բարեկամական կարգավորման և միակողմանի հայտարարության հիման վրա գանգատը գործերի ցուցակից հանելու որոշում կայացնելն ուղղակիորեն պայմանավորել է ներպետական մակարդակում գործի վերանայման հնարավորությամբ:

Բանն այն է, որ այս երկու կառուցակարգերի հիմնական նպատակն է «խուսափել» դատական գործընթացից: Այնինչ, կարևոր է ընդգծել, որ այս ինստիտուտները միևնույն է համարվում են վեճի լուծման դատական կարգավորումներ (ոչ թե վեճի լուծման այլընտրանքային կարգավորումներ) և դրանց կատարումը ենթադրում է լուրջ հսկողական կառուցակարգեր առ այն, որ դրանց հիմքում ընկած խնդիրներն ամբողջությամբ և արդյունավետորեն հասցեագրվեն: Այլ կերպ ասած, կոնվենցիոն համակարգի տրամաբանությունն այն է, որ դասական առումով դատական գործընթացի բացակայությունը չպետք է ազդի մարդու իրավունքների խախտումների վերականգնման արդյունավետության վրա: Զուգահեռաբար, պետության կողմից արված միակողմանի հայտարարության կամ բարեկամական կարգավորման հաստատմամբ ամենևին չի ավարտվում Եվրոպական կոնվենցիոն համակարգի շրջանակում առկա հսկողական գործառույթները: Ստրասբուրգի դատարանը հսկողության ներքո է պահում միակողմանի հայտարարության մեջ պետության ստանձնած պայմանների կատարումը. հակառակ դեպքում գործը վերադարձնում է գործերի ցուցակ և սովորական ընթացակարգով քննություն իրականացնում: Ինչ վերաբերում է բարեկամական կարգավորում-

ներին, ապա դրանցում ներառված պայմանների կատարման նկատմամբ հսկողության իրականացումը վերապահված է Նախարարների կոմիտեին, որն էլ իր հսկողական գործառույթն իրականացնում է այն նույն տրամաբանությամբ, ինչ խախտում արձանագրող վճռի կատարման պայմաններում:

Կարևոր է ընդգծել, որ մեծ հաշվով ինչպես Եվրոպական դատարանը, այնպես էլ Նախարարների կոմիտեն որևէ տարբերություն չեն դնում այն հանգամանքի միջև՝ արդյոք գործի վերաբացումը պետք է իրականացնել կամ իրականացվել է խախտում արձանագրող վճռի, թե Դատարանի կողմից հաստատված միակողմանի հայտարարության կամ բարեկամական կարգավորման շրջանակում: Սրանից բխում է, որ ներպետական մակարդակում գործի վերաբացման և վարույթի վերաքննման առնչությամբ առկա վերոշարադրյալ բոլոր պահանջներն ու չափանիշները նույնանում են՝ անկախ վերաբացումն ու վերանայումը Եվրոպական դատարանի խախտում արձանագրող վճռի, թե Դատարանի կողմից հաստատված բարեկամական կարգավորման և միակողմանի հայտարարության հիման վրա են իրականացվել:

Sroka v. Poland, decision, (գանգադ N° 42801/07)

Փաստեր. դիմումատուն դիմել է Եվրոպական դատարան՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման հիմքով առ այն, որ իր դատապարտումը հանգեցրել է խոսքի ազատության անհամաչափ միջամտության:

Կառավարության դիրքորոշումը. Լեհական կառավարությունը հանդես է եկել միակողմանի հայտարարությամբ՝ ճանաչելով դիմումատուի Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտումը և առաջարկելով դրամական հատուցում:

Sroka v. Poland, decision, (գանգալար N° 42801/07)

Փաստեր. դիմումատուն դիմել է Եվրոպական դատարան՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման հիմքով առ այն, որ իր դատապարտումը հանգեցրել է խոսքի ազատության անհամաչափ միջամտության:

Կառավարության դիրքորոշումը. Լեհական կառավարությունը հանդես է եկել միակողմանի հայտարարությամբ՝ ճանաչելով դիմումատուի Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտումը և առաջարկելով դրամական հատուցում:

Եվրոպական դատարանի դիրքորոշումը. Ստրասբուրգի դատարանն ընդունել է Կառավարության միակողմանի հայտարարությունը՝ անհրաժեշտ չհամարելով գործի քննության շարունակությունը: Ի հակառակ դիմումատուի, ով ցանկանում էր հասնել Եվրոպական դատարանի վճռի հիման վրա ներպետական մակարդակում իր գործը վերաբացելուն, Ստրասբուրգի դատարանն արձանագրեց, որ Լեհաստանի օրենսդրությունը ներպետական մակարդակում գործի վերաբացման հնարավորություն է ընձեռում **Եվրոպական դատարանի որոշման հիման վրա:**

Արդյունքը. կարևոր է, որ լեհական օրենսդրությունը որպես գործի վերաբացման հիմք նախատեսում է Եվրոպական դատարանի ոչ միայն խախտում արձանագրող վճիռը, այլև որոշումը, իսկ այդպիսիք են միակողմանի հայտարարությունն ու բարեկամական կարգավորումը: Ստացվում է, որ կառավարության կողմից արված միակողմանի հայտարարությունն ամենևին խոչընդոտ չէ ներպետական մակարդակում գործի վերաբացման և դրա վերաքննման համար: Ուստի, Եվրոպական դատարանը հենց այս հանգամանքի կարևորմամբ սույն գործը ցուցակ վերադարձնելու և սովորական ընթացակարգով քննելու անհրաժեշտություն չի տեսնում: Հակառակ դեպքում, Եվրոպական դատարանն իրավասու էր գործը նորոգել և քննության առնել դատական ընթացակարգով:

Jeronovičs v. Latvia, GC, (գանգալը № 44898/10)

Փաստեր. Դիմումատուի՝ ոստիկանության բաժանմունքում խոշտանգման փաստի առթիվ նախաձեռնվել է վարույթ, որը, սակայն, հետագայում կարճվել է: Դիմումատուն Եվրոպական դատարան դիմում է ներկայացրել իր քրեական գործի ոչ արդյունավետ քննության հիմքով: Այս դիմումի կապակցությամբ Կառավարությունը հանդես է եկել միակողմանի հայտարարությամբ՝ ընդունելով Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտումը և առաջարկելով դրամական հատուցում: Եվրոպական դատարանը գործը հանել է գործերի ցուցակից հետևյալ որոշմամբ՝ [44898/10](#): Այդուհանդերձ, հետագայում Եվրոպական դատարանը վերականգնել է սույն գործը և քննել սովորական ընթացակարգով այն պատճառով, որ ներպետական իշխանությունները հրաժարվել էին վերաբացել գործի վարույթը:

Միակողմանի հայտարարությունների վերաբերյալ Եվրոպական դատարանի մոտեցումը. Դատարանը գործը կամ դրա մի մասը գործերի ցուցակից հանելու Կոնվենցիայի 37-րդ հոդվածով իրեն վերապահված իրավասությունն իրացնելիս հաշվի է առնում մի շարք հանգամանքներ: Մասնավորապես, այդ հանգամանքների թվին են դասվում՝ (1) բողոքի բնույթը, (2) պետության կողմից խախտման ճանաչումը և նման խախտման համար դրամական հատուցման տրամադրումը, (3) խնդրի առարկա հարցի առնչությամբ նախադեպային իրավունքի առկայությունը, (4) այն միջոցառումների բնույթը, որոնք պետությունը պատրաստակամ է ձեռնարկել խախտումը հասցեագրելու համար: Այս հարցադրումների պատասխանները բավարար համարելուց հետո Դատարանը համոզվում է նաև այն հանգամանքում, որ դիմումի հետագա քննումն այլևս արդարացված չէ այնքանով, որքանով մարդու իրավունքների հանդեպ հարգանքն այլևս չի պահանջում գործի հետագա քննություն:

Իր այս լիազորությունն իրացնելիս Եվրոպական դատարանն ուսումնասիրում է Կառավարության միակողմանի հայտարարության մեջ ներառված պայմանները բոլոր մանրամասնությամբ և Կառավարությունից ակնկալում է ի կատար ածել իր իսկ ստանձնած պարտավորությունները: Ստացվում է, որ Կառավարության կողմից ներկայացված միակողմանի հայտարարությունը Դատարանի կողմից ենթակա է գնահատման երկու դեպքում՝

- նախքան Եվրոպական դատարանի կողմից գործը կամ դրա մի մասը գործերի ցուցակից հանելու որոշում կայացնելը.
- գործը կամ դրա մի մասը գործերի ցուցակից հանելուց հետո, երբ Դատարանը հսկողություն է իրականացնում Կառավարության ստանձնած պարտավորությունների կատարման առնչությամբ՝ ուսումնասիրելով հատկապես այն բացառիկ հանգամանքների առկայությունը, որոնց հետևանքով գործը կարող է վերականգնվել և քննվել սովորական ընթացակարգով՝ հանգեցնելով վճռի կայացման:

Սույն գործով Եվրոպական դատարանի դիրքորոշումը. Եվրոպական դատարանը գտավ սույն գործը գործերի ցուցակ վերականգնելու հիմքեր՝ ընդգծելով Կառավարության պատասխանատվությունը դիմումատուի խախտված իրավունքի դիմաց ամբողջական փոխհատուցում տրամադրելու հարցում: Հիշյալ դեպքում միայն դրամական փոխհատուցումը բավարար չէր: Հետևաբար, միակողմանի հայտարարությունը հակասում էր պետության՝ խախտումն ամբողջապես հատուցելու պարտավորությանը:

Նախարարների կոմիտեի մոտեցումը. Եվրոպական դատարանի սույն վճռից հետո ներպետական մակարդակում գործը վերաբացվել է և ուղարկվել նոր նախաքննության: Այդուհանդերձ, նախաքննության ընթացքում գործի վերաքննում իրականացնելն անհնար էր վաղեմության ժամկետներն անցնելու պատճառով⁵⁹:

⁵⁹ 1280 meeting (7-9 March 2017) (DH) - Communication from the applicant's representative

Արդյունքում Նախարարների կոմիտեն փակել է գործի կատարողական վարույթը⁶⁰:

5.2. Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայի զարգացումը և ներպետական օրենսդրության փոփոխությունները

Բարեկամական կարգավորման կամ միակողմանի հայտարարության որոշումների հիմքով գործերի վերաբացման կապակցությամբ Հայաստանի Հանրապետությունում ձևավորված դատական պրակտիկային անդրադառնալիս՝ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը դեռևս 2021 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 05-3626, 3-574 (ՎԴ) գործով կայացված որոշման մեջ, քննության առնելով նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վերաբերյալ բողոքը, արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի առկա կարգավորումները ենթակա են համակարգային մեկնաբանության՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Եվրոպական դատարան ներկայացվող գանգաղի նպատակներից է վերջնարդյունքում ներպետական մակարդակով անձի խախտված իրավունքների վերականգնումը և *restitutio in integrum*-ի ապահովումը»: Վերոնշյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ միակողմանի հայտարարության կապակցությամբ Եվրոպական դատարանի կողմից կայացված որոշումը կարող է դիտարկվել որպես նոր հանգամանք: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Եվրոպական դատարանի կողմից մարդու իրավունքների խախտում արձանագրող վճիռը կամ որոշումը, ինչպես նաև

(02/12/2016) in the case of Jeronovičs against Latvia (Application No. 44898/10) [Anglais uniquement] [DH-DD(2017)7]

⁶⁰ Տե՛ս Նախարարների կոմիտեի վերջնական՝ Resolution CM/ResDH(2017)312:

բարեկամական կարգավորումը և միակողմանի հայտարարությունը չպետք է միանշանակ կերպով դիտարկվեն որպես գործերի վերաբացման անվերապահ հիմք:

Զուգահեռաբար Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրականացրեց օրենսդրական փոփոխությունների նախաձեռնություն, որոնք 2022 թվականի հունիսին ընդունվեցին և ուժի մեջ մտան: Մասնավորապես, ըստ այդ նախաձեռնության, առաջարկվում էր քրեական, քաղաքացիական և վարչական դատավարությունների օրենսգրքերի համապատասխան վերաբերելի հոդվածները լրացնել դրույթներով, ըստ որոնց՝ որպես ներպետական դատարաններում քրեական, քաղաքացիական և վարչական գործերի վերանայման հիմք նախատեսվում են նաև կողմերի միջև ձեռք բերված հաշտության համաձայնությունը կամ Հայաստանի Հանրապետության կողմից արված և Եվրոպական դատարանի կողմից հաստատված միակողմանի հայտարարությունը:

Ստացվում է, որ Հայաստանի Հանրապետությունում դատական պրակտիկան ինքնին զարգացել է Եվրոպական կոնվենցիոն համակարգի կողմից որդեգրած սկզբունքներին ու չափանիշներին համապատասխան, ինչն էլ իր արտացոլումը ստացավ 2022 թվականին կատարված վերը նշված օրենսդրական փոփոխություններում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Եվրոպական դատարանի վճռի կամ որոշման հիման վրա ներպետական գործի վերաբացման կամ վերաքննման առնչությամբ Եվրոպական կոնվենցիոն համակարգի համալիր և համակողմանի ուսումնասիրությունն ամփոփելիս կարելի է առանձնացնել հետևյալ թիրախային դրույթները՝

- ❖ ներպետական մակարդակում գործի վերաբացումը կամ վարույթի վերանայումը համարվում է *restitutio in integrum* սկզբունքի ապահովման արդյունավետ միջոց բոլոր այն դեպքերում, երբ մնացյալ միջոցներով հնարավոր չէ ամբողջապես հասցեագրել տեղի ունեցած խախտումը.
- ❖ խախտումը հասցեագրելու կամ վերացնելու արդյունավետ միջոց համարվելն ամենևին չի նշանակում, որ կոնվենցիոն համակարգը «ողջունում է» բոլոր գործերի անխտիր և մեխանիկական վերաբացումը.
- ❖ անդամ-պետություններին բավական լայն հայեցողություն է ընձեռված՝ որոշելու կոնկրետ հանգամանքներում Եվրոպական դատարանի վճռի կամ որոշման հիման վրա ներպետական գործի վերաբացման և դրա արդյունքում վարույթի վերանայման անհրաժեշտության կամ դրա արդյունավետ միջոց լինելու կամ չլինելու հարցը.
- ❖ Եվրոպական դատարանն ու Նախարարների կոմիտեն՝ որպես վճռի կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմիններ, անդամ պետությունների կողմից խախտումը հասցեագրելու համար ձեռնարկված բոլոր մի-

ջոցառումներն ու քայլերը, այդ թվում՝ ներպետական գործի վերաբացումը, դիտարկում են յուրաքանչյուր առանձին գործի սպեցիֆիկ և կոնկրետ փաստական հանգամանքների և դետալների լույսի ներքո.

- ❖ այդուհանդերձ, կոնվենցիոն համակարգի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում վեր հանել մի շարք օրինաչափություններ՝ ստեղծելով ընդհանրական պատկեր գործերի վերաբացման անհրաժեշտության, վերաբացմանը և վերանայմանը խոչընդոտող հանգամանքների և դրանց համարժեք ու արդյունավետ այլընտրանքային միջոցների վերաբերյալ.
- ❖ Եվրոպական կոնվենցիայի հոդվածների առանձնահատկություններով և խախտման բնույթով պայմանավորված (քրեական, քաղաքացիական, վարչական)՝ ներպետական գործի վերաբացման անհրաժեշտության ծավալը կարող է տարբեր լինել.
- ❖ բարեկամական կարգավորումների և միակողմանի հայտարարությունների դեպքում, որոնց պարագայում գործ ունենք Եվրոպական դատարանի որոշման (և ոչ թե խախտում արձանագրող վճռի) հետ, կարևոր է, որ դրանք, թերևս կայացված չլինելով «դասական» դատական ընթացակարգի արդյունքում, այնուամենայնիվ հիմք են գործերի վերաբացման կամ վարույթի վերանայման համար: Ավելին, այս դեպքում վերաբացման ինստիտուտի գործնական կիրառման և դրա իրականացման նկատմամբ կիրառելի են այն նույն գործոնները, չափանիշներն ու սկզբունքները, ինչ խախտում արձանագրող վճռի պարագայում:

Զափսը՝ 60x84^{1/16}: Ծավալը 5,125 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 700 օր.:
Տպագրված է «ՄՈՒՎ ԴՐԻՆՏ» ՍՊԸ-ով: